# ՄԱՍԻՍ
## ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

32րդ. ՏԱՐԻ ԹԻՒ 39 (1589) ՇԱԲԱԹ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 27, 2012
VOLUME 32, NO. 39 (1589) SATURDAY, OCTOBER 27, 2012

Պաշտօնաթերթ՝ Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ՀԱՅԱՍՏԱՆԷՆ ՄԵԿՆՈՂՆԵՐՈՒ ԹԻՒԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԷ ԱՃԻԼ

Հայաստանի գաղթականական ծառայութեան տուեալներուն համաձայն, այս տարուայ առաջին ինը ամիսներուն Հայաստանէն մեկնած ու չէ վերադարձած 97 հազար մարդ՝ 7 հազարով աւելի, քան նախորդ տարուայ նոյն ժամանակահատուածը:

Մասնագէտները այս տարուայ ցուցանիշերու վերաբերեալ վերջնական գնահատականներ տակաւին չեն ուզեր տալ, սպասելով տարեվերջի ցուցանիշերուն, երբ Հայաստան կը վերադառնան աշխատանքի համար գաղթողները:

ՄԱԿ-ի բնակչութեան հիմնադրամի հայաստանեան գրասենեակի գործադիր ներկայացուցիչ Գարիկ Հայրապետեան «Ազատութիւն» ռատիոկայանի հետ զրոյցի ընթացքին առանձնացուց աննախադէպ չափերով Հայաստանի բնակչութեան ծերացման խնդիրը: Ըստ անոր, տարեկան Հայաստանէն հեռացողները կը կազմեն Հայաստանի բնակչութեան 1.5 տոկոսը, ինչ որ բնակչութեան կառուցուածքի փոփոխութիւն է ու ազգային անվտանգութեան խնդիր:

2024 թուականին, ըստ Հայրապետեանի, բնակչութեան մէկ ստուար մասը տարեցներ պիտի ըլլան, իսկ 2050 թուականին Հայաստանի միջին տարիքը պիտի ըլլայ 50-ը:

Հայաստանի հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտի աշխատակից, գաղթականական հարցերով փորձագէտ Միհրան Գալստեան համաձայն, եթէ արտագաղթի համար կարեւոր գործօն նկատուող սոցիալական խնդիրները լուծում ստանան, ամէն տարի երկիրը ձգողներու թիւը կը նուազի:

Գալստեանի գնահատականով, Հայաստանէն հեռացողներու մեծ մասը կը հեռանան ոչ թէ աւելի լաւ ապրելու ակնկալիքով, այլ օրուայ հացը վաստակելու համար. - «Նրանք հիմնականում Ռուսաստանի Դաշնութիւն են մեկնում, որտեղ գոնէ կարողանում են նորմալ ապրել: Այդքան մեծ գումարներ էլ չեն վաստակում... Այդ գումարների որոշ մասը եթէ ապահովուի այստեղ, ես կարծում եմ, որ նրանց մի մասը չի գնայ Հայաստանից»:

ՄԱԿ-ի բնակչութեան հիմնադրամի հայաստանեան գործադիր ներկայացուցիչ Գարիկ Հայրապետեան եւս կը յայտնէ, որ Հայաստանի կառավարութիւնը պարտաւոր է իր հետագայ ծրագիրներում մէջ հաշուի առնել կանխատեսումները՝ արտագաղթի վերաբերեալ եւ արդէն իսկ նման փորձեր կան:

## ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ Կ'ԱԿՆԿԱԼԷ ԱԶԱՏ ՈՒ ԱՐԴԱՐ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ



Դեսպաններ՝ Անտրէյ Սորոկին եւ Տրայըն Հրիսթիան Երեւանի մէջ կայացած մամլոյ ասուլիսի ընթացքին

ԵԱՀԿ երեւանեան գրասենեակի ղեկավար, դեսպան Անտրէյ Սորոկին եւ Եւրոպային Միութեան հայաստանեան պատուիրակութեան ղեկավար, դեսպան Տրայըն Հրիսթիան Երեւանի մէջ կայացած մամլոյ ասուլիսի մը ընթաքին յայտարարեցին, որ Հայաստան-ԵՄ հետագայ համագործակցութիւնը կախուած կ'ըլլայ, թէ ինչպէս կը կազմակերպուին 2013-ի նախա-գահական ընտրութիւնները:

Եւրոպական Միութեան պատուիրակութեան ղեկավար Տրայըն Հրիսթիան ասուլիսի ընթացքին յայտարարեց, որ Եւրոպական Միութիւնը պատրաստ է աջակցելու Հայաստանին՝ նուիրատուներու համաժողով հրաւիրելու հարցով, եթէ Երեւանը շարունակէ իր ջանքերը, երկրէն ներս բարեփոխումներու իրականացման եւ ազատ ու արդար ընտրութիւններու կազմակերպման ուղղութեամբ:

Հրիսթիան շեշտեց, որ Եւրոպական Միութիւնը Հայաստանէն կ'ակնկալէ, որ 2013 թուականին նախատեսուած նախագահական ընտրութիւններու ընթացքը «համահունչ ըլլայ միջազգային չափանիշերուն». - ««Աւելին աւելիի դիմաց» սկզբունքը մեր կողմէ չէ առաջարկուած: Այդ սկզբունքը միատեղ հաւանութեան արժանացած է Եւրամիութեան Արեւելեան գործընկերութեան վերջին գագաթնաժողովին եւ կ'ընդգծէ Եւրամիութեան պատրաստակամութիւնը՝ աւելի շատ աջակցութիւն ցուցաբերել այն երկիրներուն, որոնք բարեփոխումներ կ'իրականացնեն: Մենք արդէն իսկ քայլեր առած ենք այդ ուղղութեամբ»:

«Մէկ բան պարզ է՝ մենք պիտի շարունակենք աջակցիլ այն երկիրներուն, որոնք աւելի ջանքեր կը գործադրեն բարեփոխումներու իրականացման ուղղութեամբ», - շարունակեց Հրիսթիան: - «Ինչ կը վերաբերի նուիրատուներու համաժողովի կայացման, մենք պատրաստ ենք աջակցելու մեր հայ գործընկերներուն՝ նման համաժողովի կազմակերպման հարցով եւ առաջ շարժելու այդ ուղղութեամբ»:

Ասուլիսը հրաւիրուած էր խօսելու համար Եւրոպական Միութեան կողմէ աւելի քան 1.7 միլիոն եւրոյի նիւթական օժանդակութեան մասին՝ անցած խորհրդարանական ու գալիք նախագահական ընտրութիւններուն իրաւական ու թեքնիք աջակցութեան նպատակով:

«Հայաստանի մէջ ազատ եւ արդար ընտրութիւններու կայացումը ԵՄ-Հայաստան յարաբերութիւններու հետագայ զարգացման կարեւոր նախապայմանն է», - շեշտեց դեսպան Տրայըն Հրիսթիան:

«Մայիսին կայացած ընտրութիւններու դիտորդական առաքելութեան արդիւնքով արձանագրուեցան ակնյայտ բարելաւումներ, սակայն տակաւին կայ աւելին ընելու անհրաժեշտութիւն», - ըսաւ Եւրամիութեան պատուիրակութեան ղեկավարը:

## ԱՅՍ ՏԱՐՈՒԱՅ ԹԵԼԵԹՈՆԻ 10 ՏՈԿՈՍԸ ՊԻՏԻ ՅԱՏԿԱՑՈՒԻ ՍՈՒՐԻԱՀԱՅՈՒԹԵԱՆ

«Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր վարչութիւնը յայտարարեց, որ «Թելեթոն 2012»-ի դրամահաւաքի ընթացքին Հայաստանի եւ Արցախի նուիրատուներու կողմէ հանգանակուած գումարի 10%-ը պիտի յատկացուի սուրիահայերու հրատապ կարիքներուն:

Նոյնանման յայտարարութեամբ հանդէս եկաւ նաեւ Հիմնադրամի Ֆրանսայի տեղական մարմինը, որ նոյն նպատակին կ'ուղղուի Նոյեմբերի 15-18 տեղի ունենալիք աւանդական՝ հեռախօսով դրամահաւաքի ընթացքին հաւաքուած գումարի 10%-ը:

Ինչ կը վերաբերի Հիմնադրամի Արեւմտեան Ամերիկայի մէջ հաւաքուելիք գումարներուն, յայտնի դարձաւ որ Թելեթոնի օրը՝ Նոյեմբեր 22-ին յայտարարուած գումարներու 10%-ը պիտի օգտագործուի Հայաստանի մէջ ապաստան գտած սուրահայերու հիմնական կարիքները հոգալու նպատակով:




Այս գումարներուն մէջ բացառութիւն կը կազմեն նպատակային նուիրատուութիւնները, որոնք բարերարներու ցանկութեամբ կ'ուղղուին միմիայն իրենց կողմէ մատնանշուած ծրագիրներուն:

Հիմնադրամի Հոգաբարձուներու Խորհուրդի նախագահութիւնը Օգոստոսի որոշում կայացուցած էր, բանալ դրամատնային հաշիւներ՝ սուրիահայութեան օժանդակելու նպատակով:




**ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ**
**125-ԱՄԵԱԿԻ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ**
**ԿԻՐԱԿԻ ՆՈՅԵՄԲԵՐ 18, 2012 ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 5.00-ԻՆ**
**GLENDALE HIGH SCHOOL AUDITORIUM**
**ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ**



# ԱՅԴ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՉԻ ԳՆՈՒՄ ԱՐԵՒՄՈՒՏՔ

**ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ**

*Հայաստանի հասարակական-քաղաքական քննարկումների առանցքային թեմաներից մէկը տարիներ շարունակ եղել է եւ կայ Հայաստանի արտաքին քաղաքական կողմնորոշման խնդիրը՝ Արեւմուտք, թէ Ռուսաստան: Ներկայում, յատկապէս նախագահի ընտրութեանն ընդառաջ, Հայաստանում այդ քննարկումներն ուղղակի կամ ենթատեքստային իմաստով աշխուժանում են:*

*Բայց, այդ խնդիրը, թեման, Հայաստանի համար որեւէ ընտրութեամբ չէ, որ հանգուցալուծուելու են: Ընտրութիւնները դրանց հանգուցալուծման հարցում երեւի թէ նոյնիսկ առանձնակի դեր էլ չեն կատարելու: Ընտրութիւնը հայաստանեան քրէաօլիգարխացուած կեանքի եւ կենսակերպի մի հերթական դրուագ է, որ խոշոր հաշուով, մասշտաբներից բացի, որեւէ այլ բանով չի տարբերւում ասենք ՏԷՑ-ի կուռգի ռազբորկայից:*

*Հայաստանի արտաքին կողմնորոշման խնդիրն ունի երկու շերտ: Մի մակարդակում Հայաստանի կատարած ընտրութիւնն է՝ իշխանութեան եւ հանրութեան մակարդակում, իսկ միւս մակարդակում համաշխարհային իրավիճակն է, կամ եթէ փոքր ինչ կոպիտ բնորոշեմ՝ Արեւմուտքի եւ Ռուսաստանի կատարած ընտրութիւնը:*

*Ընդ որում, առանցքայինը հենց այդ՝ երկրորդ մակարդակում կատարուողն է:*

*Արեւմուտքն էլ, Ռուսաստանն էլ ընտրել են Հայաստանին: Երկու բեւեռի համար էլ Հայաստանն ունի առանցքային նշանակութիւն, եւ առկայ է մրցակցութիւն եւ պայքար Հայաստանը սեփական ուղեծրում տեսնելու համար: Այստեղ անշուշտ շատ կարեւոր է, թէ իրեն որտեղ է ուզում տեսնել Հայաստանը:*

*Բայց, խոշոր հաշուով, վճռորոշը լինելու են համաշխարհային միտումները, եւ այստեղ Հայաստանն ուղղակի պարտաւոր է հաշուի առնել դրանք: Իսկ դրանց ընթացքը յուշում է, որ ոչ թէ Հայաստանն է գնում դէպի Արեւմուտք, այլ պարզապէս Արեւմուտքը Հայաստանը դուրս է բերում ռուսական ուղեծրից, եւ այդ գործընթացի դէմ անզօր է ոչ միայն Հայաստանի այսպէս կոչուած «քաղաքական դասը», այլ նաեւ Ռուսաստանն իր դասով:*

*Արեւմուտքի եւ Ռուսաստանի միջեւ ազդեցութիւնների գլոբալ պայքարում ակնյայտ է ռուսական նահանջը: Ռուսաստանը նահանջում է անգամ իր համար աւանդական տարածաշրջաններից եւ երկրներից: Ազդեցութիւնների համար պայքարում կիրառուող գործիքների եւ մեթոդների բարոյականութեան հարցն այլ է: Իհարկէ, այդ հարցը կայ, եթէ անգամ զոհւում է մէկ անմեղ երեխայ: Իսկ անմեղ զոհերը շատ են, չափից շատ:*

*Եւ դա էլ թերեւս խնդրի կարեւոր կողմ է, որովհետեւ ի վերջոյ Հայաստանի համար էլ այն ակտուալ է, եւ պէտք է գտնուել ժամանակին հնարաւորին ադեկվատ, որպէսզի Արեւմուտք-Ռուսաստան մրցակցութիւնը Հայաստանում էլ չհասնի այն իրավիճակին, երբ հանգուցալուծումների համար բեւեռներից որեւէ մէկը կիրառի մեթոդներ, որոնք կարող են բերել անմեղ զոհերի: Թէեւ, պէտք է գուցէ նկատել, որ այդ իմաստով, Հայաստանում որոշակիօրէն արդէն իսկ զոհեր եղել են՝ այդ թւում եւ անմեղ: Ի վերջոյ, այն, ինչ երկրում տեղի է ունեցել Հոկտեմբերի 27-ին եւ Մարտի 1-ին, թերեւս հնարաւոր է տեղաւորել նաեւ Հայաստանում ազդեցութեան համար գերտէրութիւնների պայքարի կոնտեքստում: Ի վերջոյ, ամենեւին պատահական չէ, որ Մարտի 1-ին երեւանեան փողոցներում Հայաստանի զինուժի շարքերում առկայ էին ռուսաստանցի ինստրուկտորներ, որոնց լուսանկարները յայտնուեցին ընդդիմադիր մամուլում:*

*Բայց, այդ հանգամանքն առաւել եւս հրամայական է դարձնում Հայաստանի ադեկւատութիւնը համաշխարհային միտումներին:*

*Իսկ այդ մակարդակում, ակնյայտ է Ռուսաստանի լայնածաւալ նահանջը, որն արտայայտուեց անգամ ՌԴ նախագահի պաշտօնին Փութինի վերադարձից յետոյ դիւանագիտական կորպուսի ներկայացուցիչների հետ հանդիպմանը: Փութինը ՌԴ արտաքին քաղաքականութեան առանցք հռչակեց ԱՊՀ ինտեգրացիոն գործընթացի խորացումը: Դա վկայում էր, որ ՌԴ-ն ընդունում է, որ իր մրցակցային հնարաւորութիւններն աշխարհում նուազել են մինչեւ ԱՊՀ սահմաններ, եւ արտաքին քաղաքական աւելի լայն առանցքային խնդիրներ Ռուսաստանն իր առաջ հրապարակաւ չի դնում:*

*Ոմանք սա կարող են դիտարկել իհարկէ որպէս զսպանակի սեղմում, բայց երբ զսպանակը սեղմւում է այն ժամանակ, երբ բացուելը ռազմավարական անհրաժեշտութիւն է, ապա այստեղ արդէն ոչ թէ սեղմուող, այլ պարզապէս չաշխատող զսպանակը խնդիր է:*

*Ջնայած գլոբալ ճգնաժամին, Արեւմտեան քաղաքական-քաղաքակրթական մեխանիզմը շարունակում է լինել ամենակենսունակը եւ հանդիսանալ գլոբալ մրցակցութեան առաջատարը:*

*Բաժանարար գծի վրայ յայտնուած պետութիւնների համար շատ կարեւոր է հաշուի առնել այդ միտումը, եւ ուժերն ու ռեսուրսները, առաւել եւս եթէ դրանք շատ սուղ են՝ ինչպէս Հայաստանի պարագայում, վատնել ոչ թէ լարախաղացութեան, այլ պարզապէս առկայ միտումներին հնարաւորինս պատրաստ լինելու վրայ: Իսկ դա նշանակում է ձեւակերպել պետութեան շահն ու այն տեղաւորել համաշխարհային զարգացման կոնտեքստում: Միեւնոյն ժամանակ, անհրաժեշտ է աւելացնել ներքին դիմադրունակութեան ռեսուրսները, քանի որ նահանջող բեւեռը բնականաբար կարող է դառնալ աւելի ու աւելի ռեակցիոն, ինչի դրսեւորումներն ի դէպ նկատելի են վերջին շրջանում:*

*Միեւնոյն ժամանակ, դա ամենեւին առաջարկ չէ այն մասին, որ ով ուժեղ է, պէտք է տրուել նրան: Այստեղ ուժեղի եւ թոյլի հարց չէ, այլ համաշխարհային միտումների: Դրանցից դուրս յայտնուելը սպառնալիք է ցանկացած պետութեան համար, եւ եթէ ասենք կան պետութիւններ, որոնք ունեն որոշակի ինքնաբաւութեան ռեսուրսներ եւ կարող են դիմագրաւել տեւական ժամանակ՝ չնայած ժամանակի մէջ կորցնելով շարունակաբար, ինչպէս օրինակ Ռուսաստանը, ապա փոքր պետութիւնը համաշխարհային միտումներից եւ կոնտեքստից դուրս մնալու պարագայում կարող է պարզապէս կանգնել ոչնչացման առաջ՝ ֆիզիքապէս կամ բարոյապէս:*

*Հայաստանի պարագայում, իրավիճակն առաւել քան նպաստաւոր է այն տեսանկիւնից, որ առկայ միտումները բխում են պետութեան շահից: Անշուշտ, որեւէ երաշխիք չկայ, որ դա այդպէս էլ կարող է շարունակուել: Բայց, քանի կայ այդ ներդաշնակ հնարաւորութիւնը, պէտք է այն օգտա-*

*Շար.ը էջ 16*

# ՀԱՅԻ ՅԵՏԻՆ ԽԵԼՔՆ ՈՒ ՅՈՅՍԸ

**ԿԱՐԻՆԷ ՍԱՐԻԲԵԿԵԱՆ**

*Շքեղ հրավառութեամբ ուղեկցուող ճոխ տօնակատարութիւնների, խաչ դնելու, եկեղեցի կառուցելու եւ նման շարքի այլ միջոցառումների զարգացման միտումները Հայաստանում ողբերգական զաւեշտի են վերածւում: Նման կարգի միջոցառումները, սովորաբար իրենց գագաթնակէտին են հասնում նախընտրական շրջանում:*

*Այդ իմաստով Հոկտեմբերը բաւականին տօնառատ էր: Նախ ցածրակարգ ռուսական աստղերը դարձան 2794-ամեայ Երեւանի ծննդեան «պատուաւոր» հիւրերը, իսկ օրեր անց Արագածի լանջին քար-տառերի պուրակում ազդարարուեց 33-մեթրանոց «Յոյսի խորան» խաչի յայտնութիւնը՝ ճոխ կերուխումով, զուռնա-դհոլով, խորոված ու հարիսայով:*

*Երբ դատարկւում է երկիրը, երբ երիտասարդը կացարան եւ աշխատանք չունենալու համար չի համարձակւում ընտանիք կազմել, երբ հեռաւոր գիւղում դպրոցը փակւում է՝ երեխայ չլինելու պատճառով, երբ երեւանցին ամէն Աստծոյ օր քաղաքային տրանսպորտով երթեւեկում է ստորացած, խցկուած ու կռացած, երբ տաղանդաւոր սցենարիստը սոված է՝ ուտելու հաց չունի, ո՞ւմ համար է այդ յոյսի խորանը կամ տօնը: Բարեգործութիւնն ու տօնը նոյնպէս մշակոյթ են, այդ մշակոյթը կրողների արժեհամակարգը: Մի երկրում, որտեղ բնակչութեան 30 տոկոսը ապրում է ծայրայեղ աղքատութեան պայմաններում, նման կարգի միջոցառումներ կազմակերպելն ու դրանցով բարեգործի կեղծ համբաւ վաստակելը, մեղմ ասած, զաւառական մտածողութեան դրսեւորում է, դեգրադացիայի նոր նուաճում:*

*Ի՞նչ կը փոխուէր Արգիշտիի հիմնադրած Երեւանի կեանքում, եթէ հրապարակում հոգեւոր եւ իշխանական էլիտան ներկայացնող հայոց այրերը ըմբոշխնէին ոչ թէ Վերա Բրեժնեւայի սեթեւեթանքը, այլ, ասենք, Երեւանի դպրոցական երեխաների գեղարուեստական կատարումները: Մի՞թէ Աստուած աւելի շուտ չէր ների 33-մեթրանոց խաչ կառուցողների մեղքերը, եւ աւելի շատ չէին լինի անկեղծ օրհնութիւնները, եթէ փոխարէնը անօթեւանների համար կացարան կառուցուէր: Իհարկէ, Արգիշտին չէր վշտանայ, Աստուած նոյնպէս չէր զայրանայ, բայց…*

*Եթէ Երեւանի «աննախադէպ» տօնի կամ «Յոյսի խորան» խաչի եւ նրա հարեւանութեամբ եկեղեցու վերխոյացման համար ծախսուած գումարները ծախսուէր, օրինակ՝ անապահով երիտասարդ ընտանիքների համար թէկուզեւ մայրաքաղաքի ծայրամասերում բնակարաններ կառուցելու, հեռաւոր գիւղերում ճանապարհներ նորոգելու, կամ երիտասարդ ընտանիքներին նախնական ինչ-որ գումարներ տալու, անօթեւանների կացարան կառուցելու, տաղանդաւոր երիտասարդներին աջակցելու համար, հաւանաբար ինչ-որ անձինք կը զրկուէին պատմութեան մէջ իրենց պատկերացրած ձեւով մուտք գործելու բացառիկ շանսից: Բայց նոյն պատմութիւնը ազգային սնափառութեան դասեր մէկ անգամ չէ, որ տուել է մեզ, ուղղակի ճիշդ հետեւութիւն անել չենք կարողացել: Հարիւր տարի առաջ, երբ Արեւմտեան Հայաստանում ցեղասպանութեան զոհ դարձաւ մէկուկէս միլիոն հայ, եկեղեցիների ու խաչերի պակաս չկար. կար պետութեան, հզօր եւ կազմակերպուած հայի պակաս, այնպիսի հայի, որը կը կարողանար տէր կանգնել իր ապրելու իրաւունքին: Աւելին՝ Աստծոյ՝ բարեհաճութեան համար կառուցուած շինութիւնները, դժբախտաբար, օգտագործուեցին որպէս սպանդանոցի տարածք: Դեռ հարիւր յիսուն տարի առաջ եւրոպական կրթութիւնից ու բարձր պաշտօններից հեռու աշուղ Ջիւանին մեր ազգի քաղքենի խաչապաշտութիւնն այսպէս է բնութագրել. «Իրենք սնունդ չունեն ապրելու համար, եօթ հատ վանք ենք կառուցել՝ խելքի աշեցէք»: Դարերի հետ հայի հետին խելքը չի փոխուել, կոտրած տաշտակի առաջ կանգնելու պատմութեան հերթական վտանգը՝ նոյնպէս:*

*«ՀԱՅԵԼԻ»*

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ԳԱԲՐԻԷԼ ՄՈԼՈՅԵԱՆ
ՍԱՀԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

**MASSIS Weekly**
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $80.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $225.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

# ՀԱՅԱՍՏԱՆ

## ԵԻՐԱԴԱՏԱՐԱՆԸ ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ԲՈՂՈՔԸ ՄԱՍՆԱԿԻ Է ԸՆԴՈՒՆԵԼ ՔՆՆՈՒԹԵԱՆ

*Հայաստանի կառավարութիւնը Եւրադատարանից եւս երկու ամիս ժամանակ է խնդրել՝ 2008-ի Փետրուարի 19-ի նախագահական ընտրութիւնների առնչութեամբ Հայաստանի առաջին նախագահ, նախագահի նախկին թեկնածու Լեւոն Տէր-Պետրոսեանի դիմումի վերաբերեալ Եւրադատարանի հարցադրումներին պատասխանելու համար:*

*Եւրադատարանի՝ այս տարուայ Յուլիսին ուղարկուած հարցերին պատասխանելու ժամկէտը լրանում էր Սեպտեմբերի 7-ին, բայց սահմանուած ժամկէտում հարցերի պատասխանները չեն ուղարկուել:*

*Եւրոպական դատարանը Հայաստանի կառավարութեանն ուղղուած հարցադրումներում մասնաւորապէս հետաքրքրուել է, թէ 2008-ի Մարտի 1-ի առաւօտեան խաղաղ հաւաքը ցրելով արդեօք չի խախտուել խաղաղ հաւաքներ անցկացնելու՝ Լեւոն Տէր-Պետրոսեանի իրաւունքը, արդեօք Մարտի 1-ի առաւօտեան նա հարկադրաբար տեղափոխուե՞լ է Ազատութեան հրապարակից եւ ենթարկուել կալանքի, եւ եթէ այո՝ ապա դրանով արդեօք չի խախտուել նրա անձնական ազատութեան եւ ազատ տեղաշարժի իրաւունքը եւ երրորդ՝ արդեօք Տէր-Պետրոսեանի նկատմամբ չի ցուցաբերուել խտրական վերաբերմունք:*

*Հայաստանի կառավարութիւնը պատրաստակամութիւն է յայտնել այս հարցերին պատասխանել մինչեւ Նոյեմբերի 7-ը, որից յետոյ Եւրադատարանը այս գործով վճիռ կը կայացնի:*

*Տէր-Պետրոսեանի ներկայացուցիչ Վահէ Գրիգորեանը հաստատեց, որ Եւրադատարանը ֆիլտրել է Տէր-Պետրոսեանի բողոքը եւ այն մասնակի է ընդունել քննութեան: Մասնաւորապէս, Հայաստանի առաջին նախագահի պահանջն է եղել ճանաչել ազատ ընտրութեան իրաւունքի խախտումը, արտայայտուելու ազատութեան իրաւունքի սահմանափակումը, իր անձնական ազատութեան, տեղաշարժի ազատութեան, խաղաղ հաւաքներ անցկացնելու ազատութեան իրաւունքների խախտումները եւ իր նկատմամբ խտրական վերաբերմունքի փաստը:*

*Եւրադատարանը, ըստ փաստաբանի, վարոյթ չի ընդունել արտայայտուելու ազատութեան եւ ազատ ընտրութեան իրաւունքի խախտումների մասը:*

*«Այսինքն, յստակ արտայայտուել է, որ կոնվենցիայի արձանագրութեան 3-րդ յօդուածի մասով, մասնաւորապէս ազատ ընտրութեան իրաւունքի մասում, դիմումը վարոյթ չի ընդունուել», - պարզաբանեց փաստաբանը: - «Այս մօտեցումը որեւէ կերպ չի պատճառաբանուած դատարանի որոշմամբ, բայց ես կարծում եմ, որ այն պայմանաւորուած է դատարանի այն հետեւողական դիրքորոշմամբ, որ նախագահական ընտրութիւնները չեն կարող դիտուել որպէս օրէնսդիր իշխանութեան ընտրութիւններ: Այդուհանդերձ, փաստաբանը որեւէ արտառոց բան չի տեսնում գանգատը մասնակի քննելու մէջ:*

*«Որպէս կանոն այդպէս է: Եւրոպական դատարան ներկայացուած դիմումների ճնշող մեծամասնութիւնը միանշանակ քննութեան չի ընդունւում», - նշեց Վահէ Գրիգորեանը:*

## ՓՈՐՁՈՒՄ ԵՆ ԼՌԵՑՆԵԼ ԸՆԴԴԻՄՈՒԹԵԱՆ ՁԱՅՆԸ ԵԽԽՎ-ՈՒՄ. ԼԵՒՈՆ ԶՈՒՐԱԲԵԱՆ

*Եւրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովում (ԵԽԽՎ) հայաստանեան պատուիրակութեան հիմնական կազմում «Հայ ազգային կոնգրէս» խորհրդարանական խմբակցութեան ներկայացուցիչ Լեւոն Զուրաբեանը յաջորդ տարուանից ռոտացիոն կարգով փոխարինուելու է, ինչը նա պայմանաւորում է ԵԽԽՎ-ի կառոյցներում իր հնարաւորութիւնները հնարաւորինս սահմանափակելուն ուղղուած՝ ԵԽԽՎ-ում հայկական պատուիրակութեան ղեկավար Դաւիթ Յարութիւնեանի ջանքերով:*

*Tert.am-ի հետ զրոյցում Լեւոն Զուրաբեանն ասաց, որ այս տեղեկատուութիւնը դեռ վերջնականապէս պէտք է ճշդի:*

*Նա նաեւ յիշեցրեց, որ իրեն հետաքրքրում էին ԵԽԽՎ-ում Իրաւական հարցերով եւ մարդու իրաւունքների եւ Քաղաքական հարցերով եւ ժողովրդավարութեան յանձնաժողովները, սակայն ու «ամէն ինչ արեցին», որպէսզի ինքը դրանցում ներկայացուած չլինի:*

*«Եթէ դա հաստատուի, սա նշանակում է, որ շարունակական ջանքեր են, որպէսզի ընդդիմութեան ձայնը ԵԽԽՎ-ում բացառուի»,- ասաց նա:*



*ՀԱԿ խորհրդարանական խմբակցութեան ներկայացուցիչ Լեւոն Զուրաբեան*

*Ի պատասխան հարցի, որ դրա բացատրութիւնը լինելու է այն, որ ընդդիմադիր ուժ միայն ՀԱԿ-ը չէ, եւ բոլորին հերթով ԵԽԽՎ ամբիոնն օգտագործելու հնարաւորութիւն է տրուելու, ապա Լեւոն Զուրաբեանը նկատեց. «Ոնց որ թէ փոխարինողը միայն Մհեր Շահգելդեանն է («Օրինաց երկիր» կուսակցութիւնից - Tert.am)»:*

*Լեւոն Զուրաբեանը նաեւ ասաց, որ առաւել յստակ կը պատասխանի հարցն ուսումնասիրելուց յետոյ:*

## «ԱԶԱՏ ԴԵՄՈԿՐԱՏՆԵՐԸ» ԱՅԼԵՒՍ ՉԵՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ «ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ»-Ը

*«Ազատ դեմոկրատներ»-ը այլեւս չեն ներկայացնի «Ժառանգութիւն» յայտարարեց «Ազատ դեմոկրատներ» կուսակցութեան ղեկավար, «Ժառանգութեան» ցուցակով պատգամաւոր դարձած Խաչատուր Քոքոբելեանը:*

*«Ազատ դեմոկրատներ»-ի ղեկավարը այդ որոշման մասին պաշտօնապէս յայտարարեց նաեւ Ազգային ժողովի նիստի ժամանակ:*

*«Ես եւ Ալեքսանդր Արզումանեանը, ֆորմալ առումով մնալով խմբակցութեան անդամ, կը ներկայացնենք «Ազատ դեմոկրատներ»-ին», - մասնաւորապէս ասաց Քոքոբելեանը:*

*«Ժառանգութիւն» խմբակցութեան ղեկավար Ռուբէն Յակոբեանը իր հերթին յայտարարեց, որ Խաչատուր Քոքոբելեանը այլեւս որեւէ ձեւաչափով չի ներկայացնելու իրենց խմբակցութիւնը:*

*Այսպիսով, նոյն ցուցակով խորհրդարան մտած երկու քաղաքական ուժերը պաշտօնապէս յայտարարեցին համագործակցութեան աւարտի մասին:*

*«Ժառանգութիւն» խմբակցութիւնը այսուհետեւ կը ներկայացնեն Ռուբէն Յակոբեանը, Զարուհի Փոստանջեանը եւ պատգամաւորի լիազօրութիւնները առանձնած անկուսակցական Թեւան Պողոսեանը:*

*«Ազատ դեմոկրատներ»-ից Խաչատուր Քոքոբելեանն ու Ալեքսանդր Արզումանեանն էլ, մնալով խմբակցութիւնում, այն իրականում չեն ներկայացնի:*

## ԲՀԿ-Ն ՈՐՈՇԵԼ Է ԱՌԱՋԻԿԱՅՈՒՄ ՕՍԿԱՆԵԱՆԻՆ ԴԱՐՁՆԵԼ ԵԽԽՎ ՊԱՏՈՒԻՐԱԿ

*«Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւնը որոշել է առաջիկայում նախկին արտգործնախարար, «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան ներկայացուցիչ Վարդան Օսկանեանին դարձնել Եւրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) հայաստանեան պատուիրակութեան անդամ՝ յոյս ունենալով նրան զերծ պահել հնարաւոր կալանքից:*

*ԲՀԿ խորհրդարանական խմբակցութեան քարտուղար Նաիրա Զոհրաբեանը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում տեղեկացրեց, որ նախկին արտգործնախարարը դէմ չէ դառնալ ԵԽԽՎ հայաստանեան պատուիրակութեան անդամ:*

*Օսկանեանի երկու կուսակից պատգամաւորներ՝ Նաիրա Զոհրաբեանն ու Վահէ Յովհաննիսեանը, աւելի վաղ պատրաստակամութիւն էին յայտնել խորհրդարանական վեհաժողովի անդամի իրենց տեղը զիջել Օսկանեանին՝ պատճառաբանելով, թէ ԵԽԽՎ պատգամաւոր լինելը Եւրոպայի խորհրդի անդամ երկրի պատգամաւորին օժտում է լրացուցիչ անձեռնմխելիութեամբ: ԲՀԿ խմբակցութեան քարտուղարի խօսքով, կարեւոր չէ, թէ ում կը փոխարինի Օսկանեանը ԵԽԽՎ-ի հայաստանեան պատուիրակութիւնում:*

## ԲՀԿ.- «ՄԵՆՔ ԱՅԼԸՆՏՐԱՆՔ ԵՆՔ, ՈՉ ԹԷ՝ ԸՆԴԴԻՄՈՒԹԻՒՆ»

*«Մենք այլընտրանք ենք, ոչ թէ՝ ընդդիմութիւն»,- ասում է ԲՀԿ մամուլի խօսնակ Տիգրան Ուրիխանեանը:*

*Ընդդիմութիւն չլինելու բոլոր քաղաքագիտական հիմքերը, ըստ նրա, ԲՀԿ-ն ունի՝ կուսակցութիւնն այլընտրանք է բոլորին, սոցիալիստներին, ձախերին, աջերին, իշխանութեանը, այլընտրանք է խորհրդարանում ներկայացուած եւ չներկայացուած բոլոր քաղաքական ուժերին:*

*Հնարաւո՞ր է, որ այլընտրանք համարուող ԲՀԿ-ն պաշտպանի Սերժ Սարգսեանի թեկնածութիւնը: Տիգրան Ուրիխանեանը չի շտապում ոչինչ ասել՝ կը գայ ժամանակը, կը խօսեն:*

*Ի դէպ, անդրադառնալով մամուլում յաճախ շրջանառուող այն լուրերին, թէ Ծառուկեանը եւ Սերժ Սարգսեանը յաճախ են հանդիպում, ԲՀԿ խօսնակը մանրամասնեց՝ գաղտնի հանդիպումներ չեն լինում:*

*Պարոն Ուրիխանեանը վստահեցրեց, որ առաջիկայ ընտրութիւններում կուսակցութիւնն իրեն կը պահի այնպէս, որ չյուսահատեցնի իր ընտրողներին եւ հայաստանցիներին:*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԴԺԳՈՀ Է «ԱՐՄԱՒԻԱ»-ԻՑ

*«Արմենիա» միջազգային օդանաւակայաններ ընկերութիւնը հերթական անգամ յայտարարեց, որ հրաժարւում է սպասարկել «Արմաւիա»-ի թռիչքները, ինչից յետոյ ընկերութեան բոլոր չուերթները անժամկէտ յետաձգուեցին:*

*Կառավարութեանն առընթեր քաղաքացիական աւիացիայի գլխաւոր վարչութեան պետ Արտյոմ Մովսէսեանը «Ազատութիւն» ռադիոկայանին տուած հարցազրոյցում յայտարարեց, որ նման իրավիճակ իրենք երկար չեն հանդուրժի:*

*«Իհարկէ, մենք գոհ չենք, եւ կը զարմանայինք, եթէ մէկը գոհ լինէր ստեղծուած իրավիճակից: Երկրի ղեկավարութիւնը եւ ես ունենք մեր դիրքորոշումը այս հարցի շուրջ: «Արմաւիա»-ն պէտք է շատ կարճ ժամանակահատուածում փորձի այս հարցերին լուծում տալ, հակառակ դէպքում ընկերութեան գործունէութիւնը կարող է կանգնեցուել», - ասաց Մովսէսեանը:*

*«Արմաւիա»-ի եւ կառավարութեան միջեւ կայ պայմանագիր, որը լրանում է 2013 թուականի Մարտ ամսին: Փաստօրէն 5 ամսից կառավարութիւնում քննարկուելու է ընկերութեան հետ նոր պայմանագիր կնքելու հարցը: Կը շարունակի՞ արդեօք իր գործունէութիւնը աւիաընկերութիւնը, թէ՝ ոչ, ներկայումս Արտյոմ Մովսէսեանը հրաժարւում է պատասխանել: Նրա խօսքով՝ պայմանագրով ստեղծուած իրավիճակի լուծման ուղիներ չկան, այսինքն լուծումը պէտք է լինի իրավիճակային, կառավարութիւնը այս հարցի շուրջ դեռեւս չի ցանկանում կտրուկ քայլերի դիմել:*

*Հերթական անգամ չուերթների սպասարկումը դադարեցնելու պատճառը «Արմաւիա»-ի կուտակած մօտ 3 միլիոն 200 հազար դոլարի պարտքն է, ըստ «Արմենիա» միջազգային օդանաւակայաններ ընկերութեան մամլոյ խօսնակ Գէորգ Աբրահամեանի:*

# ԼՈՒՐԵՐ

## ԷԴՈՒԱՐԴ ՆԱԼԲԱՆԴԵԱՆԸ ՄԵՔՍԻԿԱՅՈՒՄ ԻՐ ԴԺԳՈՀՈՒԹԻՒՆՆ Է ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ



*Էդուարդ Նալբանդեան եւ Պատրիսիա Էսպինոսա Մեճաիճոյի մէջ կայացած հանդիպումի ընթացքին*

*Հոկտեմբերի 22-ին Մեքսիկա այցելութեամբ մեկնարկեց արտգործնախարար Էդուարդ Նալբանդեանի այցը լատինաամերիկեան երկրներ:*

*ԱԳՆ մամուլի ծառայութիւնից յայտնում են, որ Մեխիկոյում Էդուարդ Նալբանդեանը հանդիպում ունեցաւ իր գործընկերոջ՝ արտաքին յարաբերութիւնների քարտուղար Պատրիսիա Էսպինոսայի հետ:*

*Ողջունելով Հայաստանի ԱԳ նախարարին Մեքսիկայի արտաքին յարաբերութիւնների քարտուղարը նշեց, որ իր երկիրը Հայաստանը դիտարկում է որպէս բարեկամ երկիր եւ ցանկանում է ընդլայնել փոխգործակցութիւնը եւ ԱԳ նախարարի այցելութիւնը լաւ հնարաւորութիւն է քննարկելու եւ պայմանաւորուածութիւններ ձեռք բերելու այդ ուղղութեամբ:*

*Շնորհակալութիւն յայտնելով Մեխիկօ այցելելու հրաւէրի համար, Նախարար Նալբանդեանը համոզմունք յայտնեց, որ իր այցն ու դրա ընթացքում ձեռք բերուած պայմանաւորուածութիւնները պարարտ հող կը ստեղծեն տարբեր բնագաւառներում համագործակցութիւնը խթանելու համար:*

*Հայաստանի արտգործնախարարը տարակուսանք յայտնեց անցեալ տարի Մեքսիկայի նախորդ գումարման խորհրդարանի կողմից Լեռնային Ղարաբաղի վերաբերեալ իրականութիւնը խեղաթիւրող բանաձեւերի ընդունման կապակցութեամբ՝ ընդգծելով, որ այդ բանաձեւերը կոպտօրէն հակասում են միջազգային հանրութեան դիրքորոշմանը, որը բազմիցս արտայայտուել է ԵԱՀԿ Մինսկի խմբի եռանախագահ երկրների ղեկավարների կողմից:*

*Արտգործնախարարը նաեւ ընդգծեց, որ կիսում է մեքսիկացի մարդու իրաւունքների պաշտպանների տեսակէտը, որ Մեխիկոյում այսպէս կոչուած Խոջալուի յուշարձանի տեղադրումը վիրաւորանք է ցեղասպանութիւնների զոհերի յիշատակի հանդէպ, համամիտ է նաեւ ոչ միայն Մեքսիկայում, այլեւ նաեւ աշխարհով մէկ հնչած արձագանքներին՝ Մեքսիկայի մայրաքաղաքում Ադրբեջանի նախկին նախագահի արձանի տեղադրման կապակցութեամբ: Նախարար Պատրիսիա Էսպինոսան բացատրութիւններ եւ պարզաբանումներ տուեց այս կապակցութեամբ՝ նշելով, որ այդ ամէնը բացասական արձագանք է ստացել Մեքսիկայի հանրային կարծիքի կողմից:*

## «THE INDEPENDENT»-Ը ԳԵՐՄԱՆԱՑԻ ՍՊԱՆԵՐԻ ԼՈՒՍԱՆԿԱՐ Է ՀՐԱՊԱՐԱԿԵԼ՝ ԱՐՈՒԱԾ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԶՈՀԵՐԻ ՖՈՆԻՆ



*Բրիտանական «The Independent»-ը լուսանկար է հրապարակել, որում Հայոց ցեղասպանութեան զոհերի մարմինների ֆոնին գերմանացի սպաներ են լուսանկարուած: Լուսանկարը, հաւանաբար, արուել է 1915թ. ամռանը: Այնտեղ պատկերուած են Թուրք երկու սպաներ, քրդական հագուստով մի մարդ եւ գերմանական բանակի համազգեստով երկու գերմանացիներ:*

*Հրապարակման հեղինակ Ռոբերտ Ֆիսքը հարց է տալիս՝ արդեօք գերմանացիները 1915թ. հայ քրիստոնեաների զանգուածային սպանութեան կողմնակիցներ են եղել: Նա յիշեցնում է, որ սա այդ դէպքերը պատկերող լուսանկարներում գերմանացիներիների ներկայութեան միակ փաստը չէ:*

*«Առաջին համաշխարհայինի ժամանակ գերմանացի դիւանագէտները սարսափով եւ քննադատօրէն էին արձանագրում Թուրքական նահանգներում 1,5 միլիոն հայերի բռնագաղթը եւ զանգուածային սպանութիւնները՝ Թուրք մարդասպաններին տականքներ անուանելով», - գրում է Ֆիսքը:*

*Նա նաեւ նշում է, որ սպայ Արմին Վեգները կեանքը վտանգելով Ցեղասպանութեան ընթացքում լուսանկարել էր հայերին, իսկ աւելի ուշ ձերբակալուել եւ կտտանքների էր ենթարկուել Գեստապոյի կողմից:*

*Յօդուածում նշւում է, որ իր աշխատութիւններում հայ պատմաբան Փիթեր Բալաքեանը պատմել է, թէ ինչպէս Deutsche Bank-ն զբաղուել է երկաթուղու ֆինանսաւորմամբ, որով տեղի է ունեցել հայերի արտաքսումը: Ըստ պատմաբանների՝ բանկի աշխատակիցներն ապշել են տեսածից: «Պրոֆեսոր Բալաքեանը եւ այլ պատմաբաններ նոյնպէս յայտնաբերել են Հայոց ցեղասպանութեան գերմանացի որոշ վկաների կապը նացիստների վարչակարգի հետ»,- ընդգծում է Ֆիսքը:*

*Այսպէս, մասնաւորապէս Կոնստանտին ֆոն Նեյրաթը կցուած է եղել Թուրքական բանակին եւ հայերի դէմ դիտարկումներ անցկացրել: Արդիւնքում Հիտլերի օրօք նա դարձել է արտգործնախարար:*

*Ռուդոլֆ Հեսսը 1916 թուականին Թուրքիայում եղել է գերմանական կապիտան: 1940-43թթ. նա եղել է Օսվենցիմի պարետ: Նա դատապարտուել է եւ կախաղան հանուել 1947 թուականին:*

## ՈՐՔԱ՞Ն Է ԾԱԽՍՈՒՄ ԱԴՐԲԵՋԱՆԸ ՌԱԶՄԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ

*Ադրբեջանում հրապարակուել է 2013 թ. պետական բիւջէի նախագիծը: Եկամուտները կազմում են 19.1 մլրդ մանաթ (մօտ 24.4 մլրդ դոլար), իսկ ծախսերը՝ 19.8 մլրդ մանաթ (մօտ՝ 25.3 մլրդ դոլար): Բիւջէի եկամուտների մօտ 60%-ը պէտք է ձեւաւորուի Պետական նաւթային հիմնադրամի փոխանցումներից: Ըստ ադրբեջանական մամուլի՝ առաջիկայում սպասւում է նաւթային դոլարների նուազում ու դեռ պարզ չէ՝ թէ որքանո՞վ դա կը փոխհատուցուի գազի արտահանման աճի հաշուին:*

*Ըստ ադրբեջանցի փորձագէտների մի մասի՝ Ադրբեջանի կառավարութիւնն այդ հարցում չափից աւելի լաւատես է: Ռազմական նպատակներով բիւջէում նախատեսուած է ծախսել մօտ 2.9 մլրդ մանաթ (մօտ 3.7 մլրդ դոլար): Այդ գումարներից ուղղակի բանակի համար նախատեսուած է 1.5 մլրդ մանաթը (մօտ 2 մլրդ դոլար), ինչը 8.5%-ով գերազանցում է 2012 թ. մակարդակը:*

*Յիշեցնենք, որ Հայաստանի 2013 թ. պետական բիւջէի նախագծում ռազմական նպատակներով յատկացուած է 184 մլրդ դրամ (մօտ 500 մլն դոլար):*

## «ՍԻՐԻԱՑԻՆԵՐԸ ՓԱԽՉՈՒՄ ԵՆ ԱՅՆ ՔԱՂԱՔ, ՈՐՏԵՂԻՑ 1922-ԻՆ ՓԱԽԵԼ ԵՆ ՀԱՅԵՐԸ«-. BBC

*«Իզմիր դարձած Զմիւռնիայի Ուրուականները». հետեւեալ վերտառութեամբ իր անդրադարձում BBC-ն ներկայացնում է, թէ ինչպէս են սիրիացի փախստականներն այժմ հանգրուանում Թուրքիայի Իզմիր (Զմիւռնիա) քաղաքում, որն Առաջին Աշխարհամարտի շրջանում «այլանդակ սպանդի եւ աւերածութիւնների» գօտի էր:*

*Աղբիւրը գրում է, որ «այսօր անհնար է լսել սիրիացի փախստականների պատմութիւնները եւ չմտածել այն ամէնի մասին, ինչ բաժին ընկաւ Զմիւռնիայի յոյն եւ հայ բնակչութեանը 1922-ի սեպտեմբերին»:*

*Նշւում են զմիւռնացիներին բաժին ընկած «թալանը, բռնաբարութիւններն ու հրդեհները»:*

*BBC-ին նաեւ նշում է «աւելի քան մէկ ու կէս միլիոն քրիստոնեաների բնաջնջման» մասին՝ ընդգծելով, որ «փողոցներից անհետացել են» այդ բազմազգ ու բազմամշակութային քաղաքի ներկայացուցիչների՝ «հայերի, յոյների, հրեաների ձայները»:*

## ԵՐԵՒԱՆԸ ՅԱՅՏՆՈՒԵԼ Է ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԱԱՐԱԳ ՄԱՀԱՑՈՂ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՑԱՆԿՈՒՄ՝ ԸՍՏ ՄԱԿ-Ի

*Հայաստանի մայրաքաղաք Երեւանը յայտնուել է աշխարհի ամենաարագ մահացող 28 քաղաքների ցանկում, որը կազմուել է ՄԱԿ-ի՝ քաղաքների վիճակի մասին զեկոյցի հիման վրայ:*

*Այդ ցուցակում Երեւանը զբաղեցրել է 24-րդ հորիզոնականը: Աշխարհի մայրաքաղաքներից այդ ցանկում են նաեւ Հռոմը, Բուխարեստը, Բուդապեշտը, Պրահան, Հաւանան եւ Թբիլիսին:*

*Ցուցակի 28 երկրներից 11-ը ռուսական քաղաքներ են, այդ թւում՝ Սանկտ-Պետերբուրգը, 5-ը՝ ուկրաինական, 3-ը՝ իտալական, երկուսը՝ հարաւ կորէական մեգապոլիսներ եւ մէկական քաղաքներ Հունգարիայում, Վրաստանում, Լիբերիայում, Ռումինիայում, Չեխիայում Հայաստանում եւ Կուբայում:*

*Քաղաքների վարկանիշը կազմելու համար վերցուել են աւելի քան 750 հազար բնակիչ ունեցող քաղաքների 1990-2010 թուականների տուեալները: Բացի այդ, օգտագործուել է այդ քաղաքների բնակչութեան թիւի կանխատեսումը 2025 թուականի համար:*

*Ըստ այդմ, աշխարհի ամենաարագ մահացող քաղաքը ռուսական Նիժնի Նովգորոդն է, որը 2025 թուականին կը կորցնի 1990 թուականին ունեցած իր բնակչութեան 12 տոկոսը:*

*Աշխարհի ամենաարագ բարգաւաճող 30 քաղաքների վարկանիշում ռուսական քաղաքներից յայտնուել է միայն Մոսկուան:*

www.massisweekly.com

## ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ
# ՌՈՊԷՐ ԳԱՐԱՕՂԼԱՆԵԱՆ ՀՆՉԱԿԵԱՆ ԴՐՕՇԱԿԸ ԲԱՐՁՐԱՑՈՒՑ ԱՐԱՐԱՏԻ ԳԱԳԱԹԻՆ

*Հարցազրոյցը վարեց՝ ԶՕՀՐԱՊ ՏԷՕՔՄԷՃԵԱՆ*

Թուականէս 3 ամիս առաջ, 18 Յուլիս 2012-ին, զրաւեալ Արարատ լերան վրայ բարձրացաւ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան 125-ամեակին նուիրուած դրօշակը: Այս նուաճումը եւ անոր առթած հպարտութիւնը իրագործեց լիբանանահայ լեռնագնաց Ռոպէր Գարաօղլանեանը, որ իր անձնական միջոցներով Արարատի գագաթը բարձրանալով, օժանդակեց նաեւ 8 անձերէ բաղկացած խմբակի մը, որ նոյնպէս հետեւի նոյն ճամբուն եւ բարձրանայ Արարատի գագաթը:

«Արարատ» թերթի խմբագրատան մէջ ընդունեցինք այցելութիւնը Պր. Ռոպէր Գարաօղլանեանին, որ սիրայօժար ու մանրամասնեալ ձեւով խօսեցաւ իր »արարատեան ուխտագնացութեան» մասին, պատասխանեց անոր վերաբերող հարցումներուն, պատմեց իր զգացումներուն մասին եւ յորդորեց ու քաջալերեց, որ հայ երիտասարդներ հետեւին իր օրինակին եւ նման նուաճումներ իրականացնեն եւ հայութեան անունը բարձրացնեն նաեւ ա՛յս բնագաւառին մէջ:



*Ռուպէրին հետ կատարուած հարցազրոյցէն կարելի է նշել իր տուած տեղեկութիւնները, զգացումները, իր ապրած ուրախ թէ դժուարին պահերը եւ իր յայտնած միտքերն ու գաղափարները ե՛ւ այս մարզաձեւին եւ հայութեան ապրումներուն վերաբերեալ:*

*Լեռնագնացութիւնը իրեն համար նախասիրութիւն է (հոպի), բնութեան սէր եւ մարզանք, որ տարբեր է միւս մարզաձեւերէն:*

*Ունի իր հաճելի կողմերը, նաեւ դժուարութիւնները: Արարատի գագաթը բարձրանալու պատրաստութիւններուն սկսած է երբ այդ գաղափարը ունեցած է տարի մը առաջ: Այդ միտքը ունեցած է մէկէ աւելի առիթներով, երբ կը քալէր դաշտերու կամ քաղաքէն դուրս վայրերու մէջ: Երեւան գտնուած միջոցին ամէն օր կը դիտէր Արարատը եւ կ՚երազէր օր մը բարձրանալ անոր գագաթը: Այս նպատակին համար, 10 ամիս առաջ Հայաստանի մէջ սկսած է փորձերու եւ բարձրացած է Արագած լերան 4 գագաթներէն ամենաբարձրը:*

*Ուրեմն, որոշումը առնուած էր բարձրանալու Արարատ: Առաջին հերթին կար արտօնութիւն ստանալու հարցը: Կ՚իմանայ, որ 3-4 տարիներ առաջ ամերիկահայ մը բարձրացած է Արարատի գագաթը: Վերջինս ըրած է յայտարարութիւն մը, որ դժգոհութիւն պատճառած է թրքական իշխանութիւններուն:*

*Այս պատճառով, Թուրքիա պայման դրած է լեռ բարձրանալ փափաքող ոեւէ անձի, որ արտօնութիւն ստանայ Անգարայէն: Կար «Թիմ Լեպանոն»ը, որուն միջոցաւ կ՚ուզէ արտօնութիւն ձեռք ձգել, սակայն կը մերժուի: Կը գտնէ թրքահպատակ քիւրտ մը, որ Արարատի մօտակայ Տոկույապազիւթ գիւղի բնակիչներէն է, որ ուղեցոյցի գործով կը զբաղի: Ան կը դիւրացնէ գործը եւ կ՚ապահովէ արտօնութեան ձեռք բերումը:*

*Գարաօղլանեան կը պատմէ. «Անհրաժեշտ էր լաւապէս ու գործնականապէս պատրաստուիլ լեռնագնացութեան: Լման 10 ամիս պատրաստուեցայ փորձերով: Ամէն օր արեւածագէն առաջ, նաեւ տարբեր ժամերու, կը քալէի ու կը վազէի: Սկսայ վարժութիւններ ընել թէ՛ պաղին եւ թէ տաքին դիմանալու նպատակով: Ի վերջոյ որոշեցի բարձրանալու Թուականը: Օդանաւով մեկնեցայ Վան, անկէ ալ ինքնաշարժով տեղափոխուեցայ լերան մօտիկ վայր մը:*

*Ուղեւորութիւնը տեւեց 14-22 Յուլիս 2012: 18 Յուլիսի առաւօտեան ժամը 7:00-8:00-ի միջեւ հասանք Արարատի գագաթը:*

*Նախ կը մտադրէի մինակս բարձրանալ: Բայց առաջնորդող ուղեցոյցը պնդեց, որ նախընտրելի է խումբով բարձրանալ:*

*Նախ ես սկսայ բարձրանալ, ապա Լիբանանէն մեկնած խումբին անդամները: Առաջին 4000 մեթրը աւելի դիւրութեամբ բարձրացայ, դժուարութիւնը անկէ ետք էր: Հոն թթուածինը կը սկսի պակսիլ, ձիւնին զարկած լոյսի ցոլքը կ՚անհանգստացնէ աչքերդ, նաեւ մեր գործածած ակնոցը, արեւու լոյսէն թէ ցոլքերէն պաշտպանուելու համար, մեր շունչի շոգիէն կը քրտնի:*

*Կարեւորը այն է, որ վերոնշեալ Թուականին եւ ժամուն հասայ գագաթ, ուրկէ սկսայ դիտել չորս կողմս, հայեացքս ուղղելով մանաւանդ Հայաստանի կողմը: Ստորոտէն գագաթ հասնիլը տեւեց 3.5-4 օր: Գագաթին վրայ կանգնելիք տեղը շատ նեղ էր՝ շուրջ 3x3 մեթր տարածութեամբ: Քիչ մը վարը աւելի լայն էր՝ մօտ 15 մեթր տարածութեամբ:*

*Երբ արդէն իրականացուցած էի երազս եւ կը գտնուէի մեր սուրբ լերան գագաթին վրայ, նախապէս գոյացած կարգադրութեան հիման վրայ գագաթէն փորձեցի կապուիլ Պէյրութի «Ռատիօ Սեւան»ին հետ, բայց այդ մէկը չյաջողեցաւ: Բաւական մը իջնելէ ետք սակայն կարողացայ կապ հաստատել ռատիօկայանին հետ»: «Ինծի համար կարեւոր նպատակակէտ էր իմ նախասիրութեանս կողքին իրականացնել այլ քայլ մը, որն է Արարատի գագաթին պարզել Հնչակեան դրօշակը: Այդ նպատակին համար, հետս տարած էի ՍԴՀԿ-ի 125-ամեակին նուիրուած յատուկ դրօշակը, զոր պարզեցի գագաթ հասնելէս քիչ ետք: Հետս առած էի նաեւ Հայաստանի դրօշակներ, թիւով 3 հատ: Նոյնպէս, հետս ունէի Լիբանանի եւ հայկական չորս ռատիօկայաններու դրօշակներ:*

*Իսկ ինչո՞ւ տարի հնչակեան դրօշակը եւ զայն բարձրացնելու քայլը ի՞նչ նպատակ ունէր: Անվերապահօրէն կրնամ ըսել, որ այդ գործողութիւնը կը նուիրեմ մեծ հօրս՝ Արթին Գարաօղլանեանին, որ նիւթապէս, բարոյապէս թէ այլ ձեւերով կ՚օժանդակէր ՀՄՄ-ին եւ կուսակցութեան կառոյցներուն: Նաեւ դրօշակը պարզեցի ի պատիւ հօրս՝ Գրիգոր Գարաօղլանեանին, ինչպէս նաեւ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան 125ամեակին, անոր գործունէութեան եւ առաքելութեան կատարեալ յաջողութիւն մաղթելով:*

*Արարատի գագաթին պարզուած հնչակեան այդ դրօշակը, որ «շնչած» է մեր սրբազան լերան մաքրամաքուր ջինջ օդը, միասին բերի Պէյրութ: Գացի ՍԴՀԿ-ի կեդրոն, ուր զայն յանձնեցի Լիբանանի շրջանի վարիչ մարմնի ատենապետ ընկ. Ալեքսան Քէօշկէրեանին, զայն պահելու համար կեդրոնի եւ կուսակցութեան թանկարժէք մասունքներուն շարքին:*

*Վերադառնալով Արարատի գագաթ, նշեմ, որ իջնելու ճամբուն վրայ, ինչպէս բարձրանալուն, շատ ուշադիր պէտք էր ըլլալ, մանաւանդ երբ ոտքդ հաստատ պիտի դնես որոշ տեղ մը: Հակառակ ուշադրութեանս, սահեցայ եւ ... իմ բախտէս, հանդիպեցայ միջակ ծա-*

*Շար.ը էջ 18*

# ՀՀ ՍՓԻՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՆ ԱՅՑԵԼԵԼ Է ՍԻՐԻԱՀԱՅԵՐԻ »ԿԻԼԻԿԵԱՆ« ԴՊՐՈՑ



*Սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեան Երեւանի «Կիլիկեան» դպրոց այցելութեան ընթացքին*

*ՀՀ Սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեանն այցելած է շուրջ 3 շաբաթ առաջ Հայաստանում բացուած եւ սիրիական կրթական ծրագրով դասաւանդուող «Կիլիկեան» դպրոց, այս մասին տեղեկացնում են Սփիւռքի նախարարութիւնից:*

*Մինչեւ ուսումնական գործընթացին ծանօթանալը նախարարը խորհրդակցութիւն է անցկացրել դպրոցի տնօրինութեան, Երեւանի քաղաքապետարանի մասնագէտների, ուսուցիչների եւ Կիլիկեան բարեսիրական միութեան ղեկավարների մասնակցութեամբ:*

*Ներկաները նախարարին տեղեկացրել են, որ ապահովուած են բոլոր անհրաժեշտ պայմանները, երեխաները դասերն անցկացնում են վերանորոգուած դասասենեակներում, ֆիզկուլտուրայի դասերը կայանում են կահաւորուած մարզադահլիճում, իսկ Սոֆի Դեւոյեանի շնորհիւ անվճար յաճախում են պարի դասերի:*

*Ներկայումս դպրոցում սովորում է 1-9-րդ դասարանցի 265 աշակերտ, դասաւանդում են Սիրիայից Հայաստան եկած ուսուցիչներ, արդէն իսկ բազմացուել եւ աշակերտներին են տրուել համապատասխան դասագրքերը:*

*Նախարար Յակոբեանը հետաքրքրուել է դասաւանդման եւ ուսման որակով՝ կարեւորելով առանց թերացումների դասապրոցեսի կազմակերպումն ու աշակերտների՝ ուսման նկատմամբ տրամադրուածութիւնը:*

*«Ուզում եմ շնորհակալութիւն յայտնել բոլոր նրանց, ովքեր փորձեցին օգտակար լինել այս նախաձեռնութեանը: Մեր ուսուցչուհիներն այսօր հերոսական գործ են անում, նուիրեալ աշխատանք, որպէսզի ոչ մի աշակերտ խորթութիւն չզգայ»,- ասել է նա:*

*«Բնականաբար մենք չէինք կարող անտեսել սիրիահայերի ցանկութիւնը՝ ունենալ սիրիական ծրագրով դպրոց: Այս դպրոցի բացումն առաջին հերթին ՀՀ նախագահի քաղաքական կամքի դրսեւորումն էր: Եւ երբ կարգաւորուի իրավիճակը Սիրիայում, մեր հայրենակիցները որոշեն գնալ հետ, երեխաները որեւէ դժուարութիւն եւ ուսումնական բացթողում չեն ունենայ շնորհիւ նրանց համար կազմակերպուած դպրոցի»,- աւելացրել է նախարարը:*

*Այնուհետեւ Հրանոյշ Յակոբեանը շրջել է դասասենեակներում, զրուցել երեխաների հետ, լսել նրանց տպաւորութիւնները հայաստանեան կեանքի, ժամանցի ու կենսակերպի վերաբերեալ, ինչպէս նաեւ՝ ծանօթացել նրանց ընտանիքներին յուզող տարաբնոյթ խնդիրներին:*

# ՎԱՐԴԱՆ ՕՍԿԱՆԵԱՆ ԱՄԲԱՍՏԱՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ



*ՀԱՅԿ ՆԱԳԳԱՇԵԱՆ*

*Հայաստանի իշխանութեան կողմէ նախկին նախագահ Ռ. Քոչարեանի վստահելին եւ տասը տարուան Արտաքին Գործոց նախարար եւ ներկայիս խորհրդարանի անդամ Վարդան Օսկանեան իր հիմնած «Սիվիլիթաս» հիմնարկին նուիրուած գումարներ սեփականացուցած ըլլալու ամբաստանութեամբ պատժամիջոցներու եւ հալածանքի ենթակայ է: Օսկանեանի դէմ այս արարքը գլխաւոր հետապնդողը ընդհանուր դատախազ Աղուան Յովսէփեանն է, որ խորհրդարանի Հոկտեմբեր 2-ի նիստին օրակարգի հարց ըրաւ զայն, որուն ի նպաստ 64 եւ 6 դէմ պատգամաւորներ քուէարկեցին: Քուէարկութեան չմասնակցեցան Բարգաւաճ Հայաստան, Ժառանգութիւն, Հ.Յ.Դաշնակցութիւն եւ Հայ Ազգային Գոնկրէսը:*

*Հարցը Օսկանեանի խորհրդարանին անդամ ըլլալն էր, որմէ զրկուելով վերջ կը գտնէր նաեւ իր անձեռնմխելիութիւնը՝ վերոյիշեալ քուէարկութեան հետեւանքով:*

*ՄԱԿի հիմնումին 60-ամեակին առթիւ, 2005 Մարտ 15-ին, Մարդու Իրաւունքներու Յանձնաժողովի նիստին, ՄԱԿի պատասխանատուութիւններն ու պարտականութիւնները թուելէ յետոյ, ան անցաւ հայկական ոլորտ, ակնարկը կեդրոնացնելով Ցեղասպանութեան վրայ, «որ Մարդու իրաւունքներու խախտման ամենէն ծայրայեղ դրսեւորումն է», ըսաւ ան: Ցեղասպանութեան հարցը լայն քննարկումի նիւթ ընելով, ան կոչ ուղղեց միջազգային ընտանիքին «երկակի չափանիշներու եւ խաղաղական հաշիւներու նպատակայարմարութիւնը մէկ կողմ դնելով, անյալայլ կերպով ճանչնան Հայոց Ցեղասպանութիւնը»: Անդրադառնալով Թուրքիոյ կողմէ ցեղասպանութեան մասին բանավէճ սկսելու առաջարկին, Օսկանեան իր մերժողական կտրուկ պատասխանը արդարացուց, յայտարարելով որ պատահածին մասին փաստերն ու պատմական արձանագրութիւնները յստակ ըլլալով, Թուրքիա պարտի ընդունիլ իր գործած ոճիրը, որուն պատասխանատուները՝ դատուեր ու դատապարտուեր էին Թուրքիոյ դատարանին իսկ կողմէ:*

*Ինչ կը վերաբերի Ռ. Քոչարեանի յայտարարութեան, թէ Հայաստան հողային պահանջք չունի Թուրքիայէն, համազգային դատապարտութեան արժանացեր էր եւ այժմ անոր սրբագրութիւնը կը կատարուէր Արտաքին Գործոց Նախարարին կողմէ:*

*Անցնելով Ղարաբաղի հարցին, Վ. Օ. մերժեց Ատրպէյճանի յառաջ մղած «հողային ամբողջականութեան» սկզբունքը, ըսելով թէ զայն պէտք է դիտել «Մարդկային իրաւունքներու» ծիրին մէջ: Ան շարունակեց. «Հեգնական է որ ներկայիս, երբ աջակցութիւն կ՚ընծայենք ընտանեկան բռնութիւններու զոհերուն, տակաւին չենք հասած իշխանութիւններու զոհերուն աջակցելուն: Եւ եթէ ինքնապաշտպանութեան դիմած զոհերը յանկարծ յաջողին, աշխարհ ետ կը քաշուի պետական ինքնիշխանութեան թմբկահարութեամբ: Այդ է որ պատահեցաւ Ս. Միութեան փլուզման օրերուն, երբ Ղարաբաղի ժողովուրդը ընտրեց ինքնորոշման ուղին, որուն դէմ Ատրպէյճան բռնութեամբ պատասխանեց, խաղաղ բնակչութեան պարտադրելով ինքնապաշտպանութեան դիմելու: Ան եզրակացուց. «Մեզի համար Մարդու Իրաւունքները վերացական սկզբունք չէ, այլ տարբերութիւնը՝ գոյատեւման կամ բնաջնջման: Զինք հալածող հայրենի իշխանութիւնը պէտք է նկատի ունենայ նաեւ անոր ազգօգուտ աշխատանքները՝ եւ շատ աւելի մեծ ուշադրութեան կեդրոնացնելով Հայրենիքի ներկայ վիճակին, ուրկէ օրական հազարաւոր հայեր կ՚արտագաղթեն՝ շատ մտահոգիչ ապագայ մը կանխատեսելու մղելով: Աշխուժօրէն Օսկանեան հալածող Հայաստանի իշխանութիւնը Հայրենիքի պարպումը արգիլելու համար պէտք է մտածէ ժողովուրդը կուշտ պահելու մասին, օրէնք եւ արդարութիւն կիրարկելու մասին:*

*Այլապէս, Ատրպէյճանի պաշտպանութեան նախարարութեան պաշտօնաթերթին 2004 Օգոստոս 4ի համարին մէջ քօլոնել Ռամիզ Մելիքովի արտայայտութիւնը՝ թէ 25-30 տարի յետոյ, Հայաստանի պետութեան գոյութեան կործանումը կրնայ իրականանալ՝ դարձեալ ենթարկուելով Ատրպէյճանի:*

*Հայաստանի պետութեան կործանման մասին միջազգային մամուլին տեսակէտներն ալ նկատի առնելով, լրջօրէն մտահոգիչ կը դարձնեն այդ հաւանականութիւնը, որուն առաջքը առնելը պարտականութիւնն է Հայրենի պետութեան՝ որեւէ այլ նկատումէ վեր:*


**Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին**

T: (626) 797-7680 F: (626) 797-6863
Massis2@earthlink.net





## ԳԻՏԱԺՈՂՈՎ ՎՈՒԴԲԸՐԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ ՄԷՋ



Դոկտ. Ժիրայր Դանիէլեան

Շաբաթ, Հոկտեմբեր 13ին, առաւօտեան ժամը 9:30էն մինչեւ կէսօրէ յետոյ ժամը 1:00 Վուտպըրի Համալսարանին մէջ տեղի ունեցաւ գիտաժողով: Նախաձաշը կազմակերպուած էր Սրբոց Ղեւոնդեանց Մայր Տաճարի Տիկնանց Օժանդակ Մարմնի կողմէ:

Գիտաժողովը սկսաւ առաւօտեան ժամը 10:00ին, որուն ներկայ էր Թեմիս Նախորդ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Վաչէ Արքեպիսկոպոս Յովսէփեան:

Բացման խօսքը կատարեց Յանձնախումբի Անդամ Դոկտ. Մինաս Գոճայեան:

Բացման աղօթքը կատարեց Գերշ. Տ. Վաչէ Արքեպիսկոպոս Յովսէփեան, ապա ողջունեց ներկաները եւ յաջողութիւն մաղթեց բանախօսներուն:

Դոկտ. Գոճայեան հակիրճ կերպով խօսեցաւ գիտաժողովի նպատակի եւ ընթացակարգի մասին:

Ներկայացուեցան երեք բանախօսութիւններ.-

Յանձնախումբի Անդամ Հայկ Մատոյեանի նիւթն էր «Հայ Գրքի պատմական զարգացումը մինչեւ Ուրբաթագիրք»:

Լիբանանէն յատկապէս հրաւիրուած Վաստակաշատ Մատենագէտ՝ Դոկտ. Ժիրայր Դանիէլեան, որ նախկին Տնօրէնն էր Յովակիմեան Մանուկեան եւ Դարուհի Յակոբեան Վարժարանի, որուն նիւթն էր. «Հայ առաջին գիրքի ողիսականը եւ անոր վերջնագոյն բացայայտումը»:

Կարճ դադարէ մը ետք ներկայացուեցաւ վերջին բանախօսութիւնը, որմէ առաջ ցուցադրուեցաւ 500ամեակի նուիրուած տեսանիւթը, որ պատրաստուած էր Վահէ Սարգսեանի եւ Արամ Մուսոյեանի կողմէ:

Դոկտ. Արժ. Տ. Զաւէն Աւագ Քհնյ. Արգումանեան, որուն նիւթն էր. «Յակոբ Մեղապարտէն մինչեւ Ոսկան Վարդապետ Երեւանցի 1512-1666 (Ուրբաթագիրքէն մինչեւ Սուրբ Գիրքի առաջին տպագրութիւն)»:

Հանդիսավար Դոկտ. Գոճայեան իր խորին շնորհակալութիւնները յայտնեց բանախօսներուն՝ իրենց կատարած հիանալի ներկայացումներուն համար, ինչպէս նաեւ ներկաներուն, որոնք ուշադրութեամբ հետեւած էին բանախօսութիւններուն եւ իրենց հարցումները ուղղած էին բանախօսներուն:

## «ՔԱՋ ՆԱԶԱՐ»Ի 13ՐԴ ԹԵԼԵԹՈՆԸ ՊՍԱԿՈՒԵՑԱՒ ՅԱՋՈՂՈՒԹԵԱՄԲ

«Քաջ Նազար» երգիծաթերթի կողմէ կազմակերպուած «Հայաստանի Ծնողազուրկ եւ Հաշմանդամ Երեխաներու Օգնութեան Ֆոնտ»ի 13րդ թելեթոնը աւարտեցաւ յաջողութեամբ:

Կիրակի, Հոկտեմբեր 21ին, կ.վ. ժամի 5էն մինչեւ ուշ գիշեր, կայացած հանգանակութենէն գոյացաւ շուրջ 140,000 տոլար: Այս գումարը պիտի յատկացուի գիւղերու եւ աւաններու կիսաւեր դպրոցներու եւ մանկապարտէզներու վերանորոգումին:

Ուղիղ եթերով թելեթոնին իրենց մասնակցութիւնը բերին ազգային, հասարակական եւ պետական դէմքեր, ինչպէս նաեւ կարգ մը արուեստագէտներ:

## ՀԱՄԵՐԳ ՔԱՂՑԿԵՂՈՎ ՏԱՌԱՊՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ



ՀՀ գլխաւոր հիւպատոսութեան նախաձեռնութեամբ, Լոս Անճելոսի Իրանահայերի միութեան դահլիճում, համերգով հանդէս եկան աշխարհահռչակ օպերային երգչուհի Արաքս Մանսուրեանը եւ նրա աշակերտուհին՝ Աւստրալիայի լաւագոյն սոպրանօ Լիզա Բելլը: Ծրագրում ներառուած էին Կոմիտասի, Բելլինիի, Գերշվինի ստեղծագործութիւններից:

Համերգին ներկայ էին բազմաթիւ ամերիկահայեր, արուեստագէտներ, օտարազգի հիւրեր:

ՀՀ գլխաւոր հիւպատոս Գրիգոր Յովհաննիսեանը, ողջունելով հիւրերին, տեղեկացրեց, որ երգչուհիները Լոս Անճելոսից կը մեկնեն Երեւան, որտեղ կայանալիք բարեգործական համերգի հասոյթը կ'ուղղուի քաղցկեղով հիւանդ երեխաների բուժման ֆոնտին:

Ծանր հիւանդութեամբ տառապող երեխաներին աջակցելու ծրագրին աւստրալացի երգչուհու մասնակցութիւնը պատահական չէ. նա ինքն էլ երկու անգամ տառապել է քաղցկեղից, յաջողութեամբ բուժուել եւ այժմ օգնում է միւսներին՝ յաղթահարել հիւանդութիւնը:

Լիզա Բելլի ուղեւորութիւնը Հայաստան նամակով ողջունել է Աւստրալիայի վարչապետ Ջուլիա Գիլարդը: Նա նշել է. « Հպարտութեամբ լսեցի, որ համերգից գոյացած հասոյթը կ'ուղղուի Հայաստանում քաղցկեղով տառապող երեխաների բուժման նպատակին:

Աւստրալիան գնահատում է Հայաստանի հետ բարեկամութիւնը, մենք, երկրի ներսում, ունենք յաջողակ հայ համայնք, որը հպարտ է իր ժառանգութեամբ եւ ազատութեան համար պայքարի ճանապարհով»:

## ՀՆԱՏԻՊ ԳԻՐՔԵՐՈՒ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ

Ուրբաթ, Հոկտեմբեր 12ի երեկոյեան Առաջնորդարանի Զօրայեան Թանգարանի Սրահին մէջ տեղի ունեցաւ Հնատիպ Գիրքերու Ցուցահանդէսը՝ համեմուած Աթանեան Արուեստի Դպրոցի Սաներու Նկարներով:

500ամեակի նուիրուած եւ լուսաբանիչ տեսաերիզի մը ներկայացումը կատարեց Վահէ Սարգսեան: Սրտի խօսքով հանդէս եկաւ Վլատիմիր Աթանեան, իսկ Ուրբաթագիրքը սքանչելի կերպով ներկայացուց Հայկ Մատոյեան:

Սրբազան Հայրը իր գնահատութիւնը յայտնեց կազմակերպիչ յանձնախումբին, յայտագրի մաս կազմողներուն եւ յատկապէս իր հիացումը յայտնեց Աթանեան Արուեստի Դպրոցի Սաներու նկարներուն մասին եւ քաջալերեց, որ անոնք նոր տեսիլքով շարունակէին իրենց աստուածատուր արուեստի տաղանդները:

Սրբազան Հայրը անդրադարձաւ Նախորդ օրը հայ վարժարաններու ուսանողութեան կողմէ Մայր Տաճարին մէջ տեղի ունեցած ճոխ յայտագրին՝ շեշտելով, որ Լիբանանէն յատկապէս 500ամեակի առթիւ հրաւիրուած Յովակիմեան-Մանուկեան եւ Դարուհի Յակոբեան Վարժարանի Տնօրէն՝ Պրն. Ժիրայր Դանիէլեան իր սրտի խօսքը ուղղած էր աշակերտութեան եւ Շաբաթ, հոկտեմբեր 13ին բանախօսներէն մին պիտի ըլլար կազմակերպուած գիտաժողովին:



# ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԷՋ ԲԱՑՈՒԵՑԱՒ «ՎԱՉԷ ԵՒ ԹԱՄԱՐ ՄԱՆՈՒԿԵԱՆ» ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ



*Հոկտեմբեր 18ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ հանդիսապետութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ մասնակցութեամբ Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Սերժ Սարգսեանի ու մատենադարանի բարերարներ՝ Տէր եւ Տիկին Վաչէ եւ Թամար Մանուկեաններու, տեղի ունեցաւ «Վաչէ եւ Թամար Մանուկեան» մատենադարանի բացումը:*

*Արարողութիւնը բացուեցաւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Վանական Խորհուրդի Նախագահ՝ Գերշ. Տ. Նաթան Արքեպիսկոպոս Յովհաննիսեանի խօսքով, ապա Ամենայն Հայոց Կաթողիկոսի Նախագահութեամբ կատարուեցաւ Մայր Աթոռի նորակառոյց մատենադարանի օրհնութեան կարգը:*

*Արարողութեան աւարտին ներկաներուն օրհնութեան իր խօսքը կատարեց Վեհափառ Հայրապետը: «Յիշարժան եւ տօնական է այս օրը Մայր Աթոռի համար: Եկաւ բարի պահը, եւ մեր ժողովուրդի առջեւ կը բանանք դուները «Վաչէ եւ Թամար Մանուկեան» մատենադարանի: Նորակառոյց մատենադարանը, ինչպէս կը տեսնէք, գեղեցկակերտ եւ ոգեշէն կառուցուած՝ առանձին շուք կը հաղորդէ մեր նուիրական հնագոյն Մայրավանքին: Հոգիի եւ մտքի լուսաւորութեան այս նոր կաճառը, ապահովուած է լաւագոյն պայմաններով ու հնարաւորութիւններով Մայր Աթոռի մեծաթիւ գրականութեան պահպանման եւ ուսումնասիրման համար եւ համոզուած ենք, նոր լիցք պիտի հաղորդէ մեր հոգեւոր ու գիտա-մշակութային կեանքին:*

*Այս կապակցութեամբ նշենք, որ գիտութեան աննախընթաց զարգացումով էլեկտրոնային հաշուիչ մեքենաների (կալկուլիատրի) ստեղծումը աշակերտներին դիւրութիւններ են ստեղծում, նրանք նոյնիսկ հասարակ թուաբանական աղիւսակը չեն սովորում եւ եթէ խնդրում ես երկու թուեր բազմապատկել, անմիջապէս դիմում են կալկուլիատորին: Նոյն բանն է բժշկութեան մէջ: Խորհրդային շրջանում Հայաստանում բժիշկները իրենց ուղեղներով էին ախտաճանաչում մարդու հիւանդութիւնը, իսկ Ամերիկայում եւ բոլոր զարգացած երկրներում այսօր ամէն ինչ արւում է գերզարգացած տարրալուծարաններում (լաբորատորիաներում), անալիզների միջոցով յայտնաբերելով մարդու հիւանդութիւնները: Եթէ կոպիտ արտայայտուենք, գիտութեան զարգացումը բթացնում է մարդու ուղեղը եւ նա կարծեք վերածւում է ռոբոթի՝ նրա փոխարէն ամէն ինչ անում է զարգացած գիտութեան տեխնիկան: Համոզուած ենք, որ գիտութեան օրէցօր զարգացումով ապագայում շատ աւելի անակնկալներ են սպասում մարդուն...:*

*Հանսի մօտ հարցերի շարանն այնքան շատ է, որ նրա մտքում դրանք հրմշտելով իրար, ձգտում են մէկը միւսից առաջ անցնել: Հիմա էլ «Արմենիկում»: Արդեօ՞ք պատահականութիւն է.* «Արմենիկում-փրկութեան դեղամիջոց» *դեղը յայտնաբերւում է Արմենիայում, Նոյի տապանն իջնում է Արմենիայի բիբլիական Արարատ Սուրբ սարի վրայ, Էջմիածինը հիմնւում է միածնի ցոյց տուած վայրում...: Նա եզրակացնում է, որ ոչ մի բան պատահական չի լինում, եւ՛ տիեզերքում, եւ՛ երկրի վրայ ամէն ինչ փոխ-կապակցուած է: Նոյը լինելով ազնիւ մարդ, արժանանալով Բարձեալի վստահութեանը, իրեն հետ կապուած բոլոր առեղծուածները պէտք է կատարուէին այն Սուրբ երկրում՝ Արմենիայում, որի տէրն է ինքը:*

*Նոր հարցեր են արթնանում ուղեղում. եթէ յանկարծ էլեկտրականութիւն չլինի, կը ստացուի* «Քաոս՝ աշխարհի վերջի վկայութիւն» (Էջ 175) *կամ մթնոլորտում շարունակուող աղտոտուածութիւնը, օդ նետուող ջերմութիւնը եւ այլ ազդակներ սկսեն հալել սառոյցներն ու նոր ջրհեղեղ սկսի, այդ եւս վկայում է աշխարհի վերջի մասին: Ուստի պէտք է միջոցներ ձեռնարկուեն, որպէսզի մարդկային կորուստները նուազագոյնի հասնի: Այդ ազդակների և փրկութեան միջոցների մասին նա մանրամասն խօսում է իր ունեցած հեռուստատեսային ելոյթներում ու ռատիոյով: Այդ նպատակով Հանսը Վիեննայի ազգային գրադարանին նուիրում է 50 միլիոն տոլար, որպէսզի նրան կից ստեղծուի տարբեր ուղղութեան գիտնականներով գիտական կենտրոն, որոնք ուսումնասիրեն ու ներկայացնեն առաջարկներ՝ երկիրը աղէտից փրկելու կամ կործանումը նուազագոյնի հասցնելու համար:*

*Հանսը շարունակում է պրպտումները ու այդ նպատակով կնոջ հետ ուղեւորւում է Իսրայէլ և Յորդանան: Երուսաղէմում զոյգը զարմանում է, որ* Հայկական *վանք կայ՝ Սրբոց Յակոբեանց տաճարը եւ Հայոց պատրիարքարանը Սիոնի բարձունքի վրայ, որը այցելում են Բեթղեհէմից յետոյ: Հայկական տաճարում նրանք հիանում են պատարագի արարողութեամբ և հոգեւոր երաժշտութեամբ: Այնուհետև նրանք այցելում են Քրիստոսի խաչելութեան ու Յարութեան վայրը՝ Ս. Յարութիւն տաճարը, որից տպաւորուած դուրս գալիս, մի խորհրդաւոր ծերունի է մօտենում Հանսին ու ասում, որ նա գիտի նրան եւ նրա բոլոր քայլերը, որ նա ճիշտ ուղու վրայ է, սակայն անարդիւնաւէտ է պրպտումները գումար ծախսելով, աշխարհի փրկութիւնը հաւատքով պիտի լինի, ու խորհուրդ է տալիս Հանսին նորից ընթերցել Ս. Գրքի Նոյի հատուածը: Տաճարում նա ծանօթանում է հայկական, յունական, լատին հատուածներին՝ խորհելով, որ այստեղ էլ հատուածական ենք՝ բաժան-բաժան, իսկ Քրիստոսը խաչ բարձրացաւ, որ դառնանք միասնական հաւատացեալ հանրութիւն:*

*Հիւրանոցում Հանսը նորից է կարդում Հին Կտակարանի Նոյին նուիրուած հատուածը.* «Եւ եօթերորդ ամսում՝ ամսի տասնեօթերորդ օրը տապանը Արարատ սարի վրայ նստեց: Եւ ջրերը գնալով բչանում էին մինչև տասներորդ ամիսը, տասներորդ ամսի մէկին սարերի գլուխները երեւացին» (Էջ 348): *Նա մտածում է, թէ ինչ սարեր է տեսել Նոյ Նահապետը, որ երեւում են Արարատից...: Իսրայէլում հեռուստատեսութեամբ հարցազրոյցում նա կրկնում է մարդկութեան սպառնացող վտանգները, որոնք բերում են աշխարհի կործանման եւ նշում, որ մարդկանց փրկութեան համար Ամերիկայում կառուցուած են բունկերներ աւելի քան 150 մեթր խորութեան վրայ ու արդէն վաճառուած են, չնայած նրանց մէկ միլիոն տոլար արժէքին մի ընտանիքի համար՝ այն համարելով փրկութեան բանալին: Հանսը ցանկանում է, որ մարդը, ժողովուրդը, պետութիւնները ձգտեն խաղաղ գոյակցութեան, ունենան ազնիւ վարք, որը կը լինի շօշափելի առաջընթաց: Իր տարբեր (բիբլիական) երկրներում լինելու նպատակը պրպտել և գտնել է փրկութեան բանալին գոնէ մի խումբ անմեղ մարդկանց համար:*

*Ս. Գրքի ուսումնասիրութեան ընթացքում, Հանսը համոզւում է, որ կրօնը չի հակասում գիտութեանը, որ նա է գիտութեան հիմքերի հիմքը, ինչպէս շատերն են կարծում:*

*Յորդանան գետի ափին Հանսն ու Լարիսան մտաբերում են աստուածաշնչեան դրուագը գետի մէջ առաջին քրիստոնեաների կնքման մասին, այցելում են նաեւ Պետրա քարեղէն հոգեւոր կառոյցը, որը յիշեցնում է Գեղարդը:*

*Եգիպտոսում փարաւոնների բուրգերը այցելելիս, նրանք յիշում են իրենց տեսած հրաշալի պատկերներն ու շարժանկարները նրանց մասին Մխիթարեանների մօտ եւ այլուր: Փարաւոնները անսահման հարուստ են եղել, բայց մեռնելիս ձեռքերն ակամայ դուրս են հանել սարկոֆագից՝ կարկառելով դէպի երկինք՝ դէպի յաւերժական հանգիստ: (էջ 366):*

*Յորդանան եղած ժամանակ, Երեւանից Էրվինը զանգահարում է Հանսին ու յայտնում, որ բուժման արդիւնքները հիանալի են ու ինքը սպասում է նրան, որ իր խոստումը կատարի «Արմենիկում» բժշկական կենտրոնին: Հանսը գնում է Երեւան, իսկ Լարիսան՝ Վիեննա: Հանսի երթուղին Ստամպուլով էր, որտեղ նա պատմութիւնից յիշում է, որ այդ քաղաքը՝ Կոնստանդնուպոլիսը եւ Այա Սոֆիա Ս. տաճարը կառուցեց հզօր Բիւզանդիայի Կոնստանդին կայսրը, 500 տարի առաջ, իսկ թուրքերը այն գրաւելով արեան ծով դարձրին՝ կոտորելով բնակչութեանը, մեր ժամանակի արտայայտմամբ՝ նրանք ցեղասպանութիւն գործեցին:*

*Երեւանում Հանսն ու Էրվինը գնում են «Արմենիկում» բժշկական կենտրոնը և Հանսը կատարում է իր խոստումը: Էրվինի ձրի բուժումը զարմանք է պատճառում Հանսին, ուստի նա ուզում է մեծ նուիրատուութիւն անել «Արմենիկում» բժշկական կենտրոնին, բայց նրա ղեկավարի առաջարկով նուիրում է 2 միլիոն տոլար՝ կենտրոնը նոր սարքաւորումներով համալրելու համար, այդ ընթացքում մտածելով, թէ ինչ վեհանձն է ու ինչպիսի հպարտութիւն ունի հայը: Նուիրատուութիւնը նշւում է Նոյի ստեղծած գինու շառաւիղով՝ շամպայնով:*

*Հանսը Էրվինի հետ այցելում է Արագած լեռը: Օտար լեզուի ինստիտուտ աւարտած Մերսետես մակնիշի տաքսու վարորդը, անկախ իր կամքից, գիդի դեր է ստանձնում, ծանօթացնում է նրանց շրջապատի և Բիւրականի նշանաւոր աստղադիտարանի, նրա հիմնադրի ստեղծած տեսութեան հետ, որ տիեզերքում այսօր շարունակում են ստեղծուել նոր գալակտիկաներ, Արա լեռան և քառագագաթ Արագածի հետ:*

*Այստեղ հեղինակը մտահոգւում է, որ Հայաստանում բուհ աւարտած մասնագէտը տաքսի է վարում՝ իր մասնագիտութեամբ գործ չլինելու պատճառով, իսկ միւս կողմից՝ նա բազմակողմանի զարգացած անձնա-*

*Շար.ը էջ 18*


ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

ՅՈՒՇԱՐՁԱՆ

ՈՒՍՈՒՑՉԱՊԵՏ ԲԵՆԻԱՄԻՆ ԺԱՄԿՈՉԵԱՆԻ






Սրտաբուխ նուէրով գիրքէն օրինակ մը ստանալու համար հեռաձայնել՝
**(626) 797-7680** կամ
**(818) 429-2322** թիւերուն

Լաթակազմ, մաքուր տպագրութեամբ, 580 էջերէ բաղկացող գիրքը: Ժողովածուն լոյս ընծայուած է Բենիամին Ժամկոչեանի նախկին սաներուն կողմէ, որպէս երախտիքի տուրք անոր ծննդեան 115 ամեակի առիթով:

Յուշարձան ժողովածուն, նաեւ իր մէջ կ՛ամփոփէ իրենց սիրեցեալ տնօրէնին կրթական, մանկավարժական, ազգային-մշակութային, Պէյրութի Սահակեան վարժարանի կէս դարեայ կենսապատումը:

Յուշարձան ժողովածուն կը մատուցէ Բենիամին Ժամկոչեանի ժամանակիցներուն յուշերու ծաղկաքաղը:

**ԿՈՉ ՍԱՀԱԿԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՍԱՆ-ՍԱՆՈՒՀԻՆԵՐՈՒՆ**

Բազմավաստակ տնօրէն Բենիամին Ժամկոչեանի սան-սանուհիներէն անոնք որոնք Սահակեան Բարձրագոյն Վարժարանի կապակցութեամբ լուսանկարներ ունին իրենց մօտ, թող բարի ըլլան հեռաձայնել հետեւեալ թիւերուն:
(818) 429-2322 Տիկ. Վարդուհի Գազանճեան
(626) 422-9121 Տիկ. Արուսեակ Գրիգորեան

ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

# 125 Ամեակի

# ԵՋՐԱՓԱԿԻՉ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

Կազմակերպութեամբ՝

**Ս.Դ.Հ.Կ. 125 Ամեակի Յոբելինական Մարմնի**

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՃՈԽ ԵՒ ՅԱՏՈՒԿ ՅԱՅՏԱԳԻՐ

**ՅԱՐՈՒԹ ՅԱԿՈԲԵԱՆ • ԱՌՆՕ ՄԿՐՏՉԵԱՆ • ՇԻՐԱԶ**
**ԷԼՍԻ ՓԷՀԼԻՎԱՆԵԱՆ • ԱՆԻ ԵՓՐԵՄԵԱՆ**
**ԼԻԼԻԱ ՊԱՐԱԽՈՒՄԲ**




Կիրակի, 18 Նոյեմբեր 2012 • երեկոյեան ժամը 5:00-ին
Glendale High School-ի հանդիսասրահէն ներս՝
1440 E. Broadway, Glendale, CA 91205

ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ

# Ո՞Վ Է ԳԱԼՈՒՍՏ ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆԸ



1917 թ. բռնկուած ռուսական յեղափոխութիւնը դարձաւ համատարած սովի պատճառ, որից փրկուելու միակ յոյսն Արեւմուտքն էր: Ռուսաստանը տարադրամի կարիք ունէր՝ ժողովրդին կերակրելու եւ տնտեսութիւնը ոտքի կանգնեցնելու համար, ուստի որոշում ընդունեց երկրի բուրժուական յորջորջուած հսկայական հարստութիւնը՝ արուեստի գործերը, ցարական ունեցուածքը, ամբողջական պալատները արեւմտեան երկրներին ու ԱՄՆ-ին վաճառելու մասին: 1929 թուականին հերթը հասաւ Էրմիտաժին: Վաճառքի հանուած արժէքներն սպառւում էին ակնթարթօրէն, եւ այդ ամէնը երկրից «արտահոսում էր» ուղղակի ջրի գնով: Էրմիտաժի հարստութեան գնորդներից էր այն ժամանակ արդէն նաւթային մագնատի համբաւ ձեռք բերած եւ արուեստի գործերի հրաշալի հաւաքածու ունեցող Գալուստ Կիւլպէնկեանը:

Նա նաւթի վաճառքով զբաղուող իր գործընկերներին դիւանագիտօրէն համոզում էր արեւմտեան շուկայում իրացնել նաեւ ռուսական նաւթը՝ այդպիսով Ռուսաստանի համար ապահովելով այնքան անհրաժեշտ տարադրամը, իսկ իր համար՝ Էրմիտաժից առաջինը գնումներ կատարելու իրաւունքը: Զորս յաջողուած գործարքների շնորհիւ Գիւլբենկեանն իր հաւաքածուն հարստացրեց 18-րդ դարի ֆրանսիացի վարպետների գործերով, «Դիանայի» քանդակով, որը ժամանակին պատկանել էր անձամբ Եկատերինա Թագուհուն, շատ էժան ձեռք բերեց նաեւ մի քանի բարձրարուեստ կտաւ:

Ամբողջ այս հարստութիւնը հետագայում պէտք է հանգրուանէր նրա՝ աւելի քան 60 տարուայ ընթացքում կուտակած անձնական հաւաքածուի բազմաթիւ նմուշների կողքին, իսկ մահուանից 14 տարի անց ցուցադրուէր Լիսաբոնում բացուած եւ իր անունը կրող թանգարանում, որը աշխարհի լաւագոյն թանգարաններից է:

Սակայն Կիւլպէնկեանի համաշխարհային փառքն ու անունն առնչւում են մէկ այլ առաքելութեան հետ, որը մանկուց էր կանխորոշուած:

1869 թուականի Մարտի 23-ին Կոստանդնուպոլսի Սկիւթար թաղամասում յաջողակ եւ ունեւոր գորգավաճառ Սարգիս Կիւլպէնկեանի ընտանիքում ծնւում է առաջնեկ որդին՝ Գալուստը: Նրանից գոհ սուլթանը, որպէս շնորհակալութիւն՝ ճարպիկ վաճառականին նշանակում է սեւծովեայ Տրապեզունդ նաւահանգստի կառավարիչ: Նաւահանգիստը իւրօրինակ կամուրջ էր Ռուսաստանի եւ Փոքր Ասիայի միջեւ, ուստի ձեռներէց գործարարն առիթը բաց չի թողնում զբաղուելու նաեւ Ռուսաստանից Օսմանեան կայսրութիւն ներկրուող նաւթի վաճառքով: Հօր հարստութիւնը Գալուստի համար փայլուն կրթութիւն ստանալու հեռանկարներ է բացում: Նախնական ուսումն ստանում է Գատըգիւղի Արամեան-Ունճեան դպրոցում, ապա «Սուրբ Յովսէփ» ֆրանսիական վարժարանում: Այնուհետեւ ֆրանսերէնը կատարելագործելու համար սովորում է Մարսէյլի երկրորդ կարգի դպրոցում, յետոյ՝ Լոնդոնի Թագաւորական քոլեջի ճարտարագիտութեան բաժնում, որն աւարտում է 1887-ին՝ փայլուն գնահատականներով եւ բարձրակարգ ճարտարագէտ-նաւթարդիւնաբերողի որակաւորմամբ: Այնուհետեւ հայրը որդուն ուղարկում է Անդրկովկաս՝ ուսումնասիրելու Բաքուի քարիւղի հանքերը: Այս ճամփորդութիւնը «նաւթային գործի» սիրահարին առիթ է ընձեռում հեղինակելու լուրջ մի աշխատութիւն՝ Միջին Արեւելքի նաւթային պաշարների շահագործման եւ մշակման վերաբերեալ, ինչպէս նաեւ զանազան յօդուածներ հրատարակել ու փարիզեան «Revue des Deux Mondes» թերթում: 21 տարեկանում Կիւլպէնկեանը համարւում էր նաւթային հարցերի առաջնակարգ փորձագէտ՝ ողջ աշխարհում: Եւ պատահական չէ, որ նրա վրայ ուշադրութիւն է բեւեռում Օսմանեան կառավարութեան հանքերի նախարարը՝ խնդրելով մի տեղեկագիր պատրաստել կայսրութեան եւ Միջագետքի քարիւղի հանքերի մասին: Բանիմաց երիտասարդը բաւականին համոզիչ տեղեկագիր է պատրաստում, որով ապացուցում է, որ կայսրութեան տարածքները հսկայական նաւթային ներուժ ունեն: Բանեցրած դիւանագիտութեան շնորհիւ նա մի քանի մեծահարուստ նաւթարդիւնաբերողների համոզում է գումարներ ներդնել՝ այդ հանքերի շահագործումը կազմակերպելու համար: Աւելին՝ Կիւլպէնկեանը որոշում է հօր տուած 30000 ֆունտ ստերլինգ դրամագլխով միանալ նրանց եւ սեփական գործ սկսել: Իսկ դրա համար նախ հարկաւոր էր ազդեցիկ կապեր ձեռք բերել: Այդ նպատակով մեկնում է Լոնդոն եւ այնտեղ եռանդուն գործունէութիւն ծաւալելու շնորհիւ նոր ծանօթութիւններ հաստատում, բանակցութիւններ վարում ու պայմանագրեր կնքում: Այդպէս մեկնարկում է Միջագետքի նաւթի հանքերի մշակման դարաշրջանը, ինչպէս նաեւ Կիւլպէնկեանի գլխապտոյտ վերելքը՝ փառքի աստիճաններով:

Անգլիայում նա հանդիպում է կեանքի ընկերուհուն՝ Նուարդ Եսայեանին: Նուարդը հայկական ազնուական ընտանիքից էր, շատ խելացի, կենսուրախ մի կին, ով ողջ կեանքում մնաց ամուսնու կողքին՝ որպէս հաւատարիմ նեցուկ:

1896 թուականին ծնուեց նրանց առաջնեկը՝ Նուբարը: Այդ ժամանակ ամուսինները դեռ Թուրքիայում էին, սակայն համիդեան ջարդերի պատճառով լքեցին երկիրը՝ հաստատուելով Լոնդոնի կենտրոնում:

Տեղափոխուելով Եւրոպա՝ երիտասարդ գործարարն առաւել մեծ աւիւնով է սկսում զբաղուել նաւթային գործերով: Այդ տարիներին նա իր ուժերը ներդնում է երկու խոշոր գործընկերների՝ Օսմանեան կայսրութեան եւ Անգլիայի շահերը պաշտպանելուն՝ երկար ժամանակ նրանց համար ապահովելով Միջագետքի նաւթը շահագործելու մենաշնորհը եւ ինքն էլ ունենալով իր հասանելիքը: Սակայն Առաջին համաշխարհայինի նախաշեմին արաբական նաւթի հանդէպ յաւակնութիւններ է ներկայացնում Գերմանիան: Անգլիացիները խնդրում են Կիւլպէնկեանին բանակցութիւններ վարել Գերմանիայի հետ՝ նաւթահանքերի նրա մասնաբաժինը հնարաւորինս կրճատելու նպատակով: Երկարատեւ բանակցութիւններով Կիւլպէնկեանին յաջողւում է համաձայնագրի նախագիծ կազմել, որը բաւարարում է բոլոր շահագրգիռ կողմերին:

Պատերազմի աւարտից յետոյ, երբ փլուզուել էր Օսմանեան հսկայական տէրութիւնը, եւ Գերմանիան էլ խաղից դուրս էր մնացել, Կիւլպէնկեանը ստիպուած էր նոր բանակցութիւններ սկսել հին եւ ասպարէզում յայտնուած նոր գործընկերների հետ: Պատերազմում յաղթանակած Ֆրանսիան Միջին Արեւելքի քարիւղի պահեստների տիրակալներից մէկը դառնալու նոր յաւակնորդների թւում էր: ԱՄՆ-ը նոյնպէս աչք էր դրել Միջագետքի եւ յատկապէս՝ Հիւսիսային Իրաքի քարիւղի հանքերի վրայ: Եւ Կիւլպէնկեանի շնորհիւ, Թուրքական նաւթային ընկերութեան կազմաւորումից 14 տարի անց, նոր համաձայնագիր է կազմւում (պատմութեան մէջ յայտնի է «Կարմիր գծի» համաձայնագիր անունով) նորաստեղծ Իրաքեան նաւթային ընկերութեան շրջանակներում, որի բաժնեթղթերը կիսւում են նախկին անգլիական եւ անգլո-պարսկական, նոր ֆրանսիական ու ամերիկեան ընկերութիւնների միջեւ, որոնք էլ դարձան քարիւղի ապագայ հսկաները: Հետաքրքիր է, որ այս դէպքում եւս պահպանուեց ընդհանուր դրամագլխից Կիւլպէնկեանին հասանելիք 5 տոկոսը, որի համար նրան սկսեցին կոչել «պարոն 5 տոկոս», եւ որը բազմապատկեց նրա միլիոնները:

Սակայն հարստութիւնը նրա համար թշուառներին, կարիքաւորներին ու դժբախտութեան մէջ յայտնուածներին ձեռք մեկնելու միջոց էր, ինքն անձամբ չէր սիրում անտեղի գումարներ վատնել, եթէ խօսքն իհարկէ չէր վերաբերում արուեստի հերթական գործը ձեռք բերելուն: Լինելով շատ խնայող ու ժուժկալ մարդ սեփական ընտանիքում՝ նա գումարներ չէր խնայում Թուրքիայի, Սիրիայի, Լիբանանի, Իրաքի, Յորդանանի հայկական համայնքներին առատաձեռն նուիրատուութիւններ անելու համար: Համբաւաւոր հայ մեծահարուստը մեծ գումարներ է ներդրել նաեւ Երուսաղէմի պատրիարքարանի, Կ.Պոլսի «Սբ.Փրկիչ» հիւանդանոցի եւ Էջմիածնի Մայր տաճարի վերանորոգման, ինչպէս նաեւ Երեւանի ծայրամասում կառուցուած Նուբարաշէն եւ Նոր Կեսարիա թաղամասերի շինարարութեան գործում:

Կեանքի վերջին տարիներին Կիւլպէնկեանը բնակութիւն է հաստատում Պորտուգալիայում՝ իր համար ժամանակաւոր կացարան դարձնելով լիսաբոնեան «Աւիզ» շքեղ հիւրանոցի համարները: Հաւատարիմ քարտուղարի ուղեկցութեամբ զբօսանքները նրա ամէնօրեայ արարողութիւններից էին: Դրանց միակ անյարմարութիւնը Կիւլպէնկեանի աճող հռչակն էր. նա ասես Լիսաբոնի տեսարժան վայրերից լինէր. բոլորը ուզում էին գոնէ հեռուից տեսնել աշխարհի ամենահարուստ մարդուն, իսկ երեխաները համարձակութիւն էին ունենում մօտենալ, շրջապատել ու ամենատարբեր հարցերով անհանգստութիւն պատճառել հանգստացող ծերունուն: Սակայն Կիւլպէնկեանը նրանց դէմ պայքարելու սեփական՝ զուտ «կիւլպէնկեանական» եղանակն ունէր. երեխաներին թոյլատրում էր կողքին գտնուել միայն այն պայմանով, եթէ լուռ մնան: Այդ լռութեան համար իւրաքանչիւրը մէկական մանրադրամ էր ստանում:

Կեանքի մայրամուտին՝ 81 տարեկանում զրկւում է հաւատարիմ կողակցից: Դա նրան ստիպում է մտածել կտակի մասին, որում ցանկութիւն է յայտնում Լիսաբոնում յատուկ ֆոնդ ստեղծել՝ Եւրոպայով մէկ ցրուած իր հաւաքածուի բոլոր նմուշները՝ իր բոլոր «զաւակներին» մէկտեղելու համար: Ֆոնդին նա կտակում է 2,6 միլիարդ դոլար եւ 102 միլիոն բիւջէով տարեկան շահոյթ: 2 տարի անց՝ 1955 թուականի Յուլիսի 20-ին, իր օթեւանած հիւրանոցում էլ դարի մեծագոյն մարդկանցից մէկը հրաժեշտ է տալիս կեանքին: Նրա վերջին հանգրուանը դառնում է իր միջոցներով Լոնդոնում կառուցուած Սբ. Սարգիս եկեղեցին:

# ԱՅԴ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՉԻ ԳՆՈՒՄ ԱՐԵՒՄՈՒՏՔ

Շարունակուած էջ 2-էն

գործել հնարաւորինս արագ ու լիարժէք, յետագայ անհամադրութեան պարագայում ձայնի հնարաւորինս լայն իրաւունք ունենալու եւ դրա միջոցով սեփական շահը փաստարկելու համար: Իսկ դա նշանակում է պետութեան արդիականացում, որի պատմական հնարաւորութիւնն ընձեռուել է այժմ:

Բայց որն իհարկէ ներկայում օգտագործւում է պատմութեան համար մեղմ ասած աններելի դանդաղկոտութեամբ եւ դժկամութեամբ, իսկ աւելի ճիշդ՝ «իջիր ջրի յատակը, մինչեւ կ'անցնի վտանգը» սկզբունքով: Մինչդեռ տուեալ պարագայում դա ոչ թէ վտանգը յաղթահարելու, այլ խեղդուելու ճանապարհն է:

«ԼՐԱԳԻՐ»

# «ՎԱՉԷ ԵՒ ԹԱՄԱՐ ՄԱՆՈՒԿԵԱՆ» ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ

Շարունակուած էջ 8-էն

րանի շէնքին մէջ:

Արարողութեան ներկայ էին Հայաստանի Հանրապետութեան Ազգային ժողովի Նախագահ Յովիկ Աբրահամեան, Հայաստանի Հանրապետութեան Վարչապետ Տիգրան Սարգսեան, ՀԲԸՄ Նախագահ Պերճ Սեդրակեան, մայր Աթոռի միաբաններն ու պաշտօնէութիւնը, 87րդ ընդհանուր ժողովի առիթով Հայաստան ժամանած ՀԲԸՄ անդամներ եւ հիւրեր:

# ԳՈՐԻՍ, ԳՈՒՍԱՆ ԱՇՈՏ

***ՊՕՂՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ***
***Կալիֆորնիայի Հայ Գրողների Միութեան անդամ***

*Սարահարթի բարձունքի անտառակի մուտքին ինքնաշարժը դադարեցնում է ընթացքը: Կանգնում եմ խճուղիի առաջին ոլորանի եզրին, հովտում աստղափունջ համայնապատկեր է փռուած: Գորիս քաղաքն է այն: Դէպի ներքեւ հոսող ուղիղ փողոցների վրայ շարան-շարան բարձր տները գնում փռւում են հովիտի կողերի դարաւանդներին, ընկողմանում այնտեղից վազող գետակի ջրերում: Հովտում իջած մշուշի սարդոստայնն էր արեւի ճառագայթներից երերում, իջնում ծառերի սաղարթներին: Աստղերի կարմիր լոյսով վառուած տների տանիքներն են ժպտում արեւին, նրա սպիտակ ճառագայթներն են իջել այնտեղ, կարմիր ու սպիտակ լոյսի պերճանք, թէ՞, լոյսի հրաշախաղ: Խնձորենիների, կեռասենիների կանաչն էր հովանի տներին, որ նրանց կարմիր տները չըռնկէին արեւի լոյսի կրակից: Հեռու կեռասենիներն էին բոցկլտում մանրիկ կրակներով: Կարմիր կեռասն էր հասունացել:*

*Հովիտի բարձունքին, վհուկների կախարդանքո՞վ, թէ՞, Է-ի անէծքով քարացած մարդիք են կանգնած: Նրանք, Նազարի դէմ կռուի ելած հսկաներն էին: Նազարը, նրանց տեսքից սարսափահար ու ակամայ առիւծին որպէս նժոյգ բազմած, արշաւել էր նրանց հանդիպման: Հսկաները նրա ահից քարացել էին: Մինչեւ հիմա էլ, դեռ իրենց երկար, հաստ ու կլոր բիրերը վերեւ պարզած, հայացքները հեռուներին, երեւի սպասում են արեւելքից արշաւել յանդգնող դուշմանին կռիւ տալու: Եղել եմ հսկաների կողքին: Այնտեղ բուսել են բարձր, շատ բարձր քարածաղիկներ, իրար կողքի հաւքեր, բազմագլխանի վիշապներ, բաշերը հողմին տուած նազարի առիւծներ, ոստիւնի պատրաստ վագրեր, թեւատարած արծիւներ, ճախրող եղջերուներ: Ակնապիշ կանգնել եմ նրանց կողքին, հոգուս երեւակայութեան ճախրանքով այնտեղ տեսել եմ քարացած հայոց հին աստուածներ՝ Խալտի-Հայկին, Արային, Միհրին, Անահիտին, Վահագնին: Քարացած հսկաների կողքին տեսել եմ Սիւնիաց աշխարհի ազատութեան համար Թուրք-դուշմանի դէմ մարտի ելած Մխիթարին գլխահակ, զինակիցները սպաննել էին նրան: Յիշատակութեան արժանի մեծ գործերի հետ, Արմինա երկրին ինչքա՜ն անհարիր արարքներ են կատարուել: Արդե՞օք, այդ հսկայ բարձունքը դրախտի մի կտորն էր, որը Աստծոյ անէծքով քարացել էր, կարող է . . .:*

*Ընկերակիցներս լուռ հետեւել էին ինձ, ձայնեցին: Նորէն վերադարձայ աշխարհ, վերդարձայ լոյսին: Ոլորաններով իջնում քաղաք, անցնում փողոցներով, ձեռքս ինքնաշարժի պատուհանից դուրս պարզած, ողջոյնում անցորդներին, բազալտէ ամուր քարերով պատած շարան-շարան տներին, նրանց առաջ հողին խոնարհած կարմիր, դեղին հագած խնձորենիներին, զուարթ լոյս էր իջել հոգուս անդաստանին:*

*Բնիկ Գորիսեցի Քուստունց Լեւոնի տան չեմ, Սիմա քոյրս է բազկատարած վազում դէպի ինձ, գրկախառնւում, անձկանօք նայում իրար, Արմենակի ու Զարուհիի ստուերներն են յառնում նրանց դէմքերից, կարօտի ժպիտ, ծիծաղ: Հեռու, հեռու աշխարհի Մուսանեռի լերան լանջերի չէնի Հայկական Լեգէոնի Կապորալ Արմենակի գերդաստանն էր հասել Զանգեզուրի լեռներ: Այդ գարմի դուստրը Գորիսեցի եղաւ, Լեւոնի ազնուազարմ Ասպետ որդուն պարգեւեց երեք տղաներ, մէկ դուստր: Զանգեզուրի լեռներ, Մուսաների պաշտամունքի լեռների նման այստեղ էլ քաջերի կռիւ եղաւ, քաջերի յաղթանակներ եղան:*

*Տան տիրոջ իրաւունքով քայլում եմ քաղաքի փողոցներով: Կանգնում Բակունց Ակսելի տան դռան շէմին, բարեւ տալիս, ունկնդրում նրա «Ծիրանի փողի» անուշ հնչիւնները: Ակսելը իր երկերում բոցավառել է Հայ գեղջուկի հոգու գեղեցկութիւնը, «Սեւ Ցելերի Սերմնացան»-ում Տիր աստծոյ մեհեանի ատրուշանից վառած գրիչի լոյսով երգել իր հայրենի բնութեան պոէզիան, իր աշխարհի լեռների լանջերի «Ալպիական Մանուշակ»ը: Ընդհատեցին իր լեռնաշխարհի գովքը երգը, հանգցրին այդ լեռների Ալպիական Մանուշակի լոյսը, այդ չարի կարգերի մարդուկը, եթէ կարողանար արեւի լոյսն էլ կը մարէր . . . :*

*Քայլում փոքրիկ հրապարակով, նրա եզրին է երկյարկանի բազալտակուռ տունը, ճակատին պատշգամբ, կանգնում նրա առաջ: Բնութեան պարգեւ՝ կեանքը, հէքիաթ է, ո՞վ է ասում այն կա՜րճ է: Դու, հրաշափառ բնութիւնից արարուած արորդի Արմէն-Հայ, քեզ շնորհուած երեւակայութեան ճախրանքով գնա՛ մինչեւ քու երկիր մոլորակի ծնունդ, քու դրախտային սրբազան լեռնաշխարհ, մտի՛ր մեհեանները քու հին աստուածների, նրանց առաջ Նաւասարդ տօնախմբի՛ր, զինուոր եղած կռուի ելի՛ր քու հայրենի հողի համար, գնա՛ Բզնունեաց ծով, հոգուդ տաճարի լոյսերը վառի՛ր նրան եզերած հրաբուխների կրակով, դիտի՛ր ծովակի ջրերի վրայ ծիածան լոյսի մէջ քու հին աստուածների ծնունդը, քու Անդրանիկի հետ դուշմանի դէմ կռուի ելի՛ր, եղի՛ր զինուորը դէպի Արցախ արշաւած նրա զօրքի: Տե՛ս, ինչքա՜ն հազար-հազար տարիների կեանքի հէքիաթով պիտի արբենաս, խրախճանաս: Քաջերի քաջ Անդրանիկն է ելել պատշգամբ, կողքին իր անբաժան մարտական ընկեր զօրավար Սմբատը: Բազուկները դէպի Արցախ աշխարհ մեկնած, ակներից շանթերի լոյսը դէպի հրապարակի խուռներամ արեւորդի Արմէն-հայերին, կռուի կանչում նրանց: Իր զօրախմբին միացած բազում Զանգեզուրցիների հետ Անդրանիկը արշաւեց Արցախ, Անգլիացի նենգ զօրավար Թոմսոնը կանգնեց այն ազատագրելու իր ճանապարհին, հաւատաց նրա խօսքին, խաբեցին . . . ինչքա՜ն խաբուեցին արեւորդի Արմէն-հայերը, ափսոս:*

*Հրապարակի միւս եզրին Գորիսի Գուսան Աշոտն է պատուանդանին կանգնած: Ակնապիշ նայում իրեն, ափերով ջուր շատրուանում դէպի իր անդրին: Իր յաւիտենական ճամբին արդեօք արդէն հասե՞լ է Վահագն Յարդագողի ճանապարհի իր ցեղի հին աստուածների տաճարներ, այնտեղ էլ հնչեցնելու Զանգեզուրի ծիրանի փողը:*

*Գուսան Աշոտ, Դալալեան Աշոտ Հայրապետի որդի: Արեւի կրակէ շապիկ հագած, Վահագն Յարդագողի ճանապարհի հայոց հին աստուածների տաճարից եկել է Զանգեզուր լեռներ, իր հետ բերել Տիր աստծոյ բանաստեղծական քնարը, իր երգերի Ապոլլոնի տաւիղը: Շանթերի լոյսի կրակով մրրկած նրա երգերը հրդեհուած են յուզականութեամբ, իր աշխարհի լեռների լանջերի Ալպիական Մանուշակների ծիածանով, նրանց կանաչ ծովակների կոհակների սահանքի զեփիւռով, եղնիկների թռիչքների արեւային լոյսով, նախնիների Միհր աստծոյ լոյսի հէքիաթով շիկնած: Իր քամանչայի լարերից հոսել են սիրոյ կայծեր, հայրենի լեռների հովեր, արտերի ցորեանի ծովակների ալիքների խայտանք, ծիածանացած անտառների հրացոլք, գարնանային զեփիւռի համբոյրի շշջիւն: Աշոտը յօրինել է տարբեր թեմաներով բազում տաղեր, նրանք հնչեցրել իր մով սարերի հովերի. հաւքերի դայլայլների ձայների եւեւէջներով: Հարազատ մնալով ժողովրդական երգարուեստի ռիթմական միջոցներին, նրա տաղերի երգերը, նոր ու ինքնատիպ երաժշտական լեզուով են հնչում:*

*Գորիսի Թիկունքի լերան ամենաբարձր գագաթի գմբէթի տակ է հանգչում Աշոտը, որ ակները յարէր իր շէնին, լեռների կանաչ ծովակներին: Լերան գագաթ եմ բարձրանում՝ այցի գնալու նրան: Ալուան ծաղիկների խուրձը գրկած հասնում գմբէթ, խոնարհում նրա շիրիմին, ծաղիկները շարում տապանին, կանգնում լուռ, որ նրա հետ զրոյց անեմ: Վեր կաց գուսան Աշոտ, վեր կաց քամանչադ վերցրու, նրա դողացող լարերի հետ քու տաղերի խօսքերը ասեմ, քեզ կարօտած արորդիները նորէն ցնծան, երգերիդ հնչիւնները անտառների ծառերի սաղարթները մրրկեն, երգի փոթորիկ լինի, երգի լոյսի անձրեւ իջնի քու շէնին, նրա բարձունքին քարացած հսկաները արշաւի ելնեն դուշմանի դէմ, քարացած ծաղիկները նորէն հուրհրացող ծիածան կապեն:*

*Աշոտ, Զանգեզուրի, արմէնների աշխարհի հողին ծառայ եղար, նրա արեւորդիների ցաւը տարար՝*

*Գուսանն էն է, որ ջրի պէս հովացնի սիրտը մարդու,*

*Երգով, կեանքով ծառայ լինի հայրենի հողին, ջրին,*

*Ուրիշի կսկիծը լայ, իրեն համար սեղմի շուրթը:*

*Սիրով լեցուն Աշոտ, աշուղ եղար քու եարին, նրա ալուան գովքը հիւսեցիր, նրան կրծքիդ սեղմած ծաղիկ արեցիր՝*

Ոչ մի ծաղիկ քու բուրմունքը չունի,

Ոչ մի մայր քեզ պէս գէոզալ չի ծնիր:

Հազար տարուայ կեանք թէ ինձ տան,

Եա՛ր առանց քեզ ինչի՞ս է պէտք:

*Սարերի, լեռների, Զանգեզուրի գուսան, նրա հովերին յենած երգեցիր նրանց հէքիաթը, ցանկացար նորէն մանկութիւն: Աշոտ, քու մանկութիւնդ կայ քու շէնի մանկանց սրտիկներում, տաղերիդ սիրոյ հնչիւնները նրանց շրթերին, անդրիիդ մատուցուած նրանց ծաղկունքի բոյրը հանգած սիրտդ կհովացնի՝*

Հով սարեր, մով սարեր,
Մանկութիւնս ետ բերէք,
Ծաղիկների ծով սարեր:

*Ցանկացար եարդ քեզ մեխակ բերէր, Աշոտ եարդ չկայ, սակայն քու աշխարհի արեւորդիները բագին դարձած անդրիիդ փունջերով, խուրձերով քու սարերի լանջերի ալուան ծաղիկներ, սիրոյ կրակներ կը բերեն՝*

Սարի սիրուն եար, սարի մեխակ բեր,

Ա՜խ, չէ, ին՞չ մեխակ, սիրոյ կրակ բեր:

*Քու լեռների կարօտով հանգչեց սիրտդ Աշոտ, ես հեռու լեռների արեւորդի, քու կողքին նստած, ակներս յառած այս վեհապանծ սարերին իմ լեռների կարօտն եմ շնչում՝*

*Բայց միշտ ձեր կարօտը քաշել, Սիւնիաց սարեր,*

*Ասես մեծ վարպետ Նաղաշի ձեռքն է հասել:*

*Գուսանների հետ մէջլիսների նստար, քու երեւակայութեան թեւերին բազմած հասար Սայաթ Նովու քաղաք, նրա թասով գինի ըմպեցիր, նրա ոգին յաղթանակի լոյս փռեց քու սազին՝*

*Երբ նստում եմ մէջլիսներում, գինի խմում անմահական,*

*Ձեռքիս թասը աւանդական քո հին թասն է, Սայաթ Նովա:*

*Իջնում եմ սարի լանջից, երեւակայութեանս պաստառին յառնում է Աշոտը, Զանգեզուրի լեռներ հասած Լագիսեան գերդաստանի պատուին տուած համերգին: Արարիչը ինչու՞ նրա, հայոց մեծերից շատ-շատերի կեանքի լոյսը վաղ մարեց: Աշոտ, Զանգեզուր լեռների մարդկանց, Արմէն-Հայ արորդիների սրտերում վառ ես՝ Արեւ ես . . . Թէկուզ հանգած:*



massispost.com
daily news updates

## ՓՐԿՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԼԻՆ

*Շարունակուած էջ 14-էն*

*ւորութիւն է, որ ձեւաւորուել է հայրենիքում ուսանելու ժամանակ, նաեւ հպարտանում է, որ ունենք աշխարհին յայտնի աստղադիտարան, որտեղ ժամանակին ակադեմիկոս Վիկտոր Համբարձումեանն ու նրա սաները տիեզերքում կատարել են բազմաթիւ յայտնագործութիւններ, որոնք շարունակւում են մեր ժամանակներում:*

*Հիւրանոցում Հանսը նորից կարդալով Ս. Գրքի* «... տասներորդ ամսի մէկին սարերի գլուխները երեւացին...» *հատուածը, նա յանկարծ գլխի է ընկնում, որ այն Արագածն է իր չորս գագաթներով ու սկսում է մտածել, որ գուցէ այդ է փրկութեան բանալին, որը հանգիստ չի տալիս իրեն և կարծէք մօտեցնում է նպատակին: Աւելի համոզուելու համար այդ հարցում, նա մտնում է «Նոյեան տապան» գրախանութը, գնում է Արարատին ու Արագածին վերաբերող գունաւոր լուսանկարներ և Հայաստանի մասին գբօսաշրջութեան վերաբերեալ գրքոյկներ ու սկսում է ուսումնասիրել դրանք: Յաջորդ օրը նրանք վերադառնում են Վիեննա:*

*Վիեննայում Հանսը մասնակցում է գիտական կենտրոնում պատրաստուած նիւթերի քննարկմանը, 50 միլիոն տոլար եւս նուիրում է կենտրոնին՝ այն դարձնելու համար միջազգային, եւ արագացնելու հարցի լուծումը: Նա մի քանի ժամ պրպտումներ է կատարում վտանգաւոր գօտիների մասին՝ Ջեռնոբիլ, Սպիտակ, Արարատ, Արագած և խորհում է, որ Արմենիայի վտանգաւոր գօտում Ջրհեղեղից փրկուեց մարդկութիւնը: Պրպտումների արդիւնքները կարծէք Հանսին յուշում են, թէ որտեղ փնտռել փրկութեան բանալին: Գրադարանից դուրս գալիս, Նրա մօտ դարձեալ յայտնւում է ճերմակամորուս ծերունին ու ժպտալով ասում, որ Նա ճիշտ ճանապարհի վրայ է... ու անհետանում:*

*Պանքում առաջարկուած շահոյթի աղբիւրներից՝ արժեթղթեր, պանքային արժետոմսեր եւ այլն, Նա հրաժարւում է մտքում դժգոհելով, որ մարդիկ միայն շահոյթի մասին են մտածում, բայց ապագան մտքներովն իսկ չի անցնում:*

*Հանսը հանրային գրադարանում սկսում է պրպտել գիտական գրականութիւնը: Նա ուշադիր ծանօթանում է յատկապէս մայաների ժամանակագրութեանը, չորրորդ և հինգերորդ ժամանակաշրջանների աւարտի մասին եղած վկայութիւններին ու եզրակացութիւններին եւ պարզում է, որ գլոբալ տաքացում չի լինելու, մի տեղ ահաւոր տաքացում է սպասւում, մի ուրիշ տեղ՝ սարսափելի ցուրտ, սառնամանիքներ...:*

*Նա անում է մի ուրիշ դատողութիւն եւս. եթէ նորից Ջրհեղեղ լինի, այն 1/3-ով աւելի թոյլ կը լինի Նոյի ժամանակուայ Ջրհեղեղից, և Ջրից դուրս կը մնան Արարատը և Արագածը իրենց չորս գագաթներով: Արարատում կ'արթնանայ հազարամեակների ընթացքում հանգած հրաբուխը: Կասպից ու Սեւ ծովերի մակարդակների բարձրացումը հսկայական տարածութիւններ կը ծածկի, Արագածն իր գագաթներով կը յայտնուի որպէս կղզի, որպէս փարոս...: Նա մտածում է, որ աւելի լաւ չի՞ լինի 10 քառ. քիլոմեթր տարածութիւն գնի Արա լերան վրայ և յատկացնի փրկութեան ելք որոնողներին, որը աւելի ճիշտ կը լինի, քան 150 մեթր սուզել մարդկանց ովկիա-նոսի բունկերները եւ յետոյ մէկիկ-մէկիկ հանել:*

*Գիտական կենտրոնում պարզւում է, որ երկրի ընդերքի տաքացումից յանգած հրաբուխների արթնացման արդիւնքում լաւայով կը ծածկուի 40-50 քիլոմեթր տարածութիւն: Հանսը մտածում է, որ ճիշտ ընտրութիւն է Արագածը, որովհետև լաւան չի հասնի նրան: Փոխանակ մէկ մարդու ու ընտանիքի համար մէկ միլիոն տոլար վճարելու բունկերների համար, մարդիկ այստեղ կը ստանան անվճար մէկ քառ. մեթր եւ այդ ձեւով կարելի է փրկել 10 միլիոն մարդ անվճար: Նա առաջարկում է յաջորդ հաւաքոյթը կազմակերպել մէկ ամիս յետոյ, որպէսզի աւելի բովանդակալից զեկոյց պատրաստուի:*

*Երեւանի «Արմենիկում» բժշկական կենտրոնի իրեն ծանօթ վարիչի միջոցով Հանսը պարզում է, որ Արայի լերան վրայ մէկ քառ. քիլոմեթր տարածքը արժէ մէկ միլիոն դրամ (մէկ եվրոն՝ 500 դրամ): Վարիչի հարցին, թէ ինչի՞ն է պէտք այդ հողատարածքը, Հանսը պատասխանում է.* «Ես այն նուիրելու եմ բոլոր նրանց, ովքեր փնտռում են 12.21.12-ից փրկութեան բանալին» (էջ 416), զրուցակցի երկրորդ հարցին՝ «Այսինքն, դուք կարծում էք, որ գալիք համաշխարհային աղէտից մարդկութեան փրկութեան միջոցը Արմենիայո՞ւմ է» (էջ 416), Հանսը պատասխանում է. «Ինչպէս «Արմենիկում»-ը ՁԻԱՀ-ից փրկելու լաւագոյն միջոցն է, այնպէս էլ Արագածը լինելու է փրկութեան լեռը: Եւ ձեռք բերելով այդ հողատարածքը՝ ես այն մեթր առ մեթր նուիրաբերելու եմ բոլոր նրանց, ովքեր որոնում են փրկութեան բանալին: Դա էլ հենց փրկութեան բանալին է: ... Մարդ արարածը վեհ առաքելութիւն ունի՝ մտածել ընդհանրական, ընդհանուրի մասին... Իմ նպատակն է փրկել նուազագոյն մէկից երկու միլիոն մարդ: Նուազագոյնը...» (էջ 417):

*Հանսը մտածում է, որ գիտական կենտրոնին նուիրած 100 հազար տոլարն այն արդիւնքը չի տուել, ինչ ՁԻԱՀ-ի կենտրոնին տուած 100 անգամ աւելի քիչ գումարը: Ուրեմն գումարի չափը չէ, որ որոշում է բուն* արժէքը, *գլխաւոր չափանիշը ՄԱՐԴՆ է:* «Ինչ հրաշալի է ապրել մի մոլորակի վրայ, որտեղ ոչ թէ մրցավազք է շահի համար, **այլ մրցավազք է մարդ արարածին օգնելու, օժանդակելու, բարձրացնելու համար**» (էջ 417):

*Հանսը խորհում է.* «... իմ գնելիք տարածքը Արա լերան վրայ թէ՛ Արարատի, թէ՛ Արագածի առաջին բաղադրիչն է, վերջին աղէտի փրկութեան վայրը» (էջ 418):

Գրքի 14-րդ գլխում նա ուսումնասիրում է Աստուածաշնչի Հին ու Նոր կտակարանների գլուխները ու համոզւում է, որ. «Ի վերջոյ ինքը գտել է փրկութեան ելքը, վայրը՝ Արագածի փեշերը: Եթէ Նոյը առաջին ջրհեղեղի փրկութեան ընտրեալն էր, երկրորդինը՝ ի՞նքն է...»: ... «Հանսը հաւատում էր փրկութեան ելքին: **Հաւատքը կը փրկի մեր այս փոքրիկ մոլորակը**» (էջ 431):

*Իր հայրենիքին ու ազգին ամբողջ հոգով նուիրուած հեղինակը «Փրկութեան բանալին» գրքով փորձում է տեսնել Հայաստանը՝ ազնիւ վարքով, բարոյականութեամբ ու զարգացած հայով կայացած ժողովրդավար երկիր, բարձրացնել Հայաստանի-Արմենիայի հեղինակութիւնը միջազգային ասպարէզում եւ նրան տեսնել ժողովրդավար եւ բարձր քաղաքակրթութեամբ օժտուած երկրների շարքում՝ որպէս հաւասարը-հաւասարի...:*

*Վերջում նշենք, որ գրախօսականը ամբողջական չէ, որովհետև հնարաւոր չէր յօդուածի սահմանափակ էջերում մանրամասնօրէն անդրադառնալ գրքում արծարծուած բոլոր հարցերին՝ ազգային, ընտանեկան, կենցաղային, ընկերային, բարոյական, համերաշխութեան, միասնութեան, խաղաղ գոյակցութեան, ազգերի և տարբեր դաւանանքների իրար նկատմամբ հանդուրժողականութեան, Ս. Գրքի Հին ու Նոր կտակարանների, որոնցից բերուած մէջբերումները զգալի տեղ են զբաղեցնում գրքում, եւ այլն:*

## ՌՈՊԵՐ ԳԱՐԱՕՂԼԱՆԵԱՆ ՀՆՉԱԿԵԱՆ ԴՐՕՇԱԿԸ ԲԱՐՁՐԱՑՈՒՑ ԱՐԱՐԱՏԻ ԳԱԳԱԹԻՆ

*Շարունակուած էջ 5-էն*

*ւալով ժայռի մը, որուն վրայ կռթնեցայ ու փաթթուեցայ, մինչեւ որ քանի մը ուղեցոյցներ հասան եւ օգնեցին ինծի:*

*Այն զգացումը, որ ունեցայ Արարատի գագաթին, աննկարագրելի է եւ անհնար է զայն բացատրել բառերով: Իսկապէս, չեմ կրնար բառեր գտնել արտայայտելու համար հոն ունեցած զգացումներս:*

*Գագաթէն իջած ատեն մտածեցի, որ այս իրագործումին մասին հաղորդեմ հայրենակիցներուս, տեղեկութիւններ փոխանցելով լեռ բարձրանալու եւ անոր հետ առնչուած հարցերու մասին: Պէյրութ վերադարձէս ետք համացանցի վրայ դրած եմ անհրաժեշտ տեղեկութիւնները եւ մեծաթիւ նկարներ: Եւ կրնամ ըսել, որ մեծ թիւով հետեւողներ հաւնած են զանոնք:*

*Ինծի համար գոհունակութիւն է, որ հայրենակիցներս հետաքրքրուին այս մարզաձեւով: Նաեւ, մեր Արարատ լերան եւ անոր շրջակայքը գտնուող գիւղերուն եւ շրջաններուն մասին հետաքրքրութիւն եւ խանդավառութիւն ստեղծուի, ըլլա՛յ Հայաստանի եւ ըլլայ սփիւռքահայ այլ գաղթօճախներու մէջ:*

*Նշեմ, որ Լիբանանէն գացած խմբակը ընդհանրապէս իմ ջանքերովս կրցաւ երթալ եւ բարձրանալ Արարատ: Այս ծիրէն ներս, հակառակ գործունէութեանս եւ աշխատանքիս նկատմամբ ցուցաբերուած որոշ անտեսումին, ինծի համար կարեւորը այն է, որ հայրենակիցներս թէ՛ յաջողութիւն գտնեն այս բնագաւառին մէջ եւ թէ մանաւանդ հայրենասիրական զգացումները բոցավառին անոնց մօտ, յիշեն հայկական բունագրաւեալ հողերը եւ երբեք չմոռնան մեր պատմութիւնը եւ հայ ժողովուրդին արդար պահանջները:*

*Արարատի գագաթէն իջնելէ ետք շրջեցայ մօտակայ կարգ մը գիւղեր: Ըսուեցաւ, որ մօտերը կայ գիւղ մը, որ հայկական եղած է եւ խաչքարեր կան հոն: Գացի. նախ հայեր չկային, իսկ խաչքարերը պարզապէս գիւղի գերեզմանատան խաչերն են, որոնց պատմութիւնը հին է բաւական»:*

*Այժմ այս առաքելութիւնը աւարտած է: Մեր այն հարցումին, թէ նիւթապէս որեւէ օգնութիւն կը ստանա՞յ, Գարաօղլանեան ըսաւ, որ բոլոր տեսակի ծախսերը ինք հոգացած է անձնապէս եւ որեւէ հովանաւոր չկայ: Սակայն յոյսեր կան, որ այս յաջողութենէն ետք հովանաւորներ պիտի գտնուին:*

*Իսկ ապագայի ծրագիրներուն մասին ան ըսաւ, թէ յաջորդ քայլը Ֆրանսայի մէջ Մոն Պլանի գագաթը բարձրանալն է, իսկ անոր յաջորդը՝ Հիմալայեան լեռները բարձրանալը կրնայ ըլլալ:*

***

*Շնորհակալութիւն յայտնելով մեր հայրենակից Ռոպէր Գարաօղլանեանին, իր գործունէութեան եւ ապագայի ծրագիրներուն մէջ կը մաղթենք կատարեալ յաջողութիւն:*




**REQUEST FOR PROPOSALS (RFP# 7569-A) PROPERTY MANAGEMENT SERVICES**

**The Housing Authority of the City of Los Angeles invites proposals from qualified, experienced property management companies to perform the management and operation of its Asset Management Portfolio consisting of up to 69 multifamily and senior market rate and multifamily, senior and income-restricted scattered properties which include up to 1,163 units. Copies of the RFP may be obtained beginning October 14, 2012 online at www.hacla.org/ps. Proposals will be accepted at 2600 Wilshire Blvd 4th Fl., Los Angeles CA 90057 until 2:00 pm (PST), November 9, 2012.**

10/25, 11/1/12
CNS-2393559#
MASSIS WEEKLY

**INVITATION FOR BIDS (IFB) NO. 7797-A GAS RANGES AT HACLA HOUSING DEVELOPMENTS**

**The Housing Authority of the City of Los Angeles (HACLA) invites vendors to submit firm fixed price bids for Gas Ranges at Housing Developments. Copies of the IFB may be downloaded from the internet at www.hacla.org under "Doing Business with HACLA", then click on "Procurement Opportunities" and click "Non-Construction Goods and Services". Bids will be accepted by the General Services Department at 2600 Wilshire Boulevard, 4th Floor, Los Angeles, CA 90057, until 1:00 P.M., Pacific Daylight Saving Time, October 22, 2012**

10/18, 10/25/12
CNS-2389214#
MASSIS WEEKLY

# ԹՈՐԳՈՄ Բ. ՊԱՏՐԻԱՐՔ ՄԱՆՈՒԿԵԱՆ

*Շարունակուած էջ 13-էն*

*համաձայն Պատրիարքական Տեղապահը հարկ էր ընտրել, եւ շաբաթ մը չանցած Միաբանական Ժողովը Ամերիկայի Արեւելեան Թեմին Առաջնորդ Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեանը ընտրեց Տեղապահ: Հանգուցեալի քառասունքէն ետք Միաբանական Ժողովը կրկին գումարուելով, 1990 Թուի մարտ 22-ին, Տեղապահ Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեանը Երուսաղէմի Հայոց Պատրիարք ընտրեց:*

*Ամենայն Հայոց Վազգէն Ա. Կաթողիկոս իր մարտ 27 Թուակիր հեռագրով «անհուն ուրախութեամբ» կ'ողջունէր Թորգոմ Պատրիարքի ընտրութիւնը: Պետական ճանաչումը կը հասնէր Իսրայէլի կառավարութենէն, եւ ապա Յուլիս 29 Թուակիր՝ Յորդանանի Թագաւորական հրովարտակով կը հաստատուէր ընտրութիւնը:*

*Նորընտիր Պատրիարքի Գահակալութիւնը տեղի կ'ունենար 1990 հոկտեմբեր 17-ին: Ամենայն Հայոց Հայրապետը Երուսաղէմ կ'ուղարկէր Մայր Աթոռոյ դիւանապետ Ներսէս Արքեպիսկոպոս Պոզապալեան: Ս. Աթոռի եպիսկոպոսներէն զատ ժամանեցին նաեւ Թեմակալ առաջնորդներ, Թիւով 14 Սրբազան Հայրեր, որոնք միաբանաբար իրենց աջը դնելով Պատրիարքի գլխուն՝ արտասանեցին «Պահպանիչ» աղօթքը: Ամենայն Հայոց Հայրապետի Կոնդակը կարդաց Ներսէս Սրբազան, ինչպէս նաեւ խօսք կ'առնէին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ու Կ.Պոլսոյ Հայոց Պատրիարքութեան ներկայացուցիչները:*

*Թորգոմ Պատրիարք Մանուկեան կատարեց իր ուխտը, ըսելով.«Խոստանամ եւ ուխտեմ առաջի Աստուծոյ եւ առաջի սրբոյ սեղանոյս խղճի մտօք եւ հաւատարմութեամբ հսկել պահպանութեան իրաւանց հայոց ի սուրբ տեղիս«: Եպիսկոպոսաց դասը ապա առաջնորդեցին զինք Յակոբոս Տեառնեղբօր Աթոռը, ուր ոտքի կանգնելով կ'ընդունէր շնորհաւորութիւններ: Իր ձեռքին պատրիարքական ասան, Պատրիարքը զայն կը նկատէր խորհրդանշանը իր «տկար անձին եւ խղճմտանքին վրայ դնող ծանր լուծին ու պարտականութեան»:*

## Պատրիարքին Անձը

*Թորգոմ Բ.Պատրիարք կը բարձրանար Առաքելական Աթոռ՝ զինուած տարիներու ծառայական փորձով: Իր աւելի քան 40 տարիներու պաշտօնավարութիւնը արտասահմանի մեծագոյն թեմերէն ներս երաշխիքն էր իր նոր պաշտօնի արդիւնաւորման: Ան եղաւ նաեւ երաժշտասէր ու գրասէր հոգեւորական մը, բանաստեղծ «Շէն Մահ» ծածկանունով, սկսեալ իր մեծ ուսուցչին եւ Հոգեւոր Հօր Գուշակեան Թորգոմ Պատրիարքին նուիրած իր առաջին «Օրերդ Որո՞ւ» զերզգայուն բանաստեղծութեամբ: Կարեւոր բաժին յատկացուցած է խղճամիտ կերպով Թեմի Դպրաց Դասերու Կազմակերպութեան՝ անոր հիմնադիրը ըլլալով, եւ հրատարակելով զոյգ հատորները հայ եկեղեցական շարականներուն՝ կատարմամբ երաժշտագէտ Վարդան Սարգսեանին:*

*Յատուկ սէր ունեցած է Կոմիտաս Վարդապետի գործերուն նկատմամբ ու հրատարակած երկու հատորներ՝ Կոմիտասի Հանճարը մեծ Երաժիշտին գործերը համադրելով, ու մեկնաբանելով իր անկորնչելի աւանդը հայ մշակոյթի պատ-ութենէն ներս: Գրած է նաեւ հատոր մը իր ուսուցչին՝ իմաստասէր եւ դասախօս Շահան Պէրպէրեանի երաժշտութիւնը պարունակող: Թորգոմ Պատրիարք ակադեմական պատւոյ աստիճան ստացած է Նիւ Եորքի* General Theological Seminary-*էն, եւ շքանշաններ՝ Նիւ Եորքի քաղաքապետարանէն եւ* Ellis Island-*ի հիմնարկութենէն:*

*Թորգոմ Պատրիարք հեղինակած է 20 մենագրութիւններ, բանաստեղծական երեք ժողովածուներ, հայ եկեղեցւոյ Ս. Պատարագի ուսումնասիրութիւններ, Մեծ Եղեռնի յատուկ «Հայ Եկեղեցւոյ Կորուստը Մեծ Եղեռնին» գիրքը, եւ Երուսաղէմի սրբավայրերու մանրամասն ուղեցոյց մը:*

## Պատրիարքարանի Գործերը

*Իր ընտրութենէն անմիջապէս ետք Թորգոմ Պատրիարք Յունիս 2 Թուակիր մանրամասնեալ կերպով «մեծ մտահոգութիւն» յայտնած է Ժառանգաւորաց եւ Ընծայարանի ուսումնական ծրագրի մասին: Դիմում կատարած է Ամենայն Հայոց Կաթողիկոսին ապահովելու համար հայագիտական դասերու յատուկ մասնագէտ ուսուցիչներ: Կարեւոր մասամբ կատարուած է իր ըղձանքը: Իսկ Յունիս 22 Թուակիր պաշտօնագրով Միաբաններուն ուղղեալ «Պատրիարքարանի իրաց կացութիւնը» յայտնած է, եւ անոնց նկատմամբ առնուելիք անմիջական քայլերը նախատեսած որպէս սկիզբը «ամբողջական, համակարգ եւ կազմակերպեալ դրութեան մը»:*

*Թորգոմ Պատրիարք կ'առաջարկէր անմիջական բարելաւում միաբաններու բնակութեան պայմաններուն մէջ, միաբանական Պարտիզաթաղը հիմնովին վերանորոգելով, պարտք մը զոր յաջողութեամբ պսակեց կարճ ժամանակի ընթացքին՝ զայն վերածելով արդիական բոլոր յարմարութիւններով օժտուած համալիրի մը: Պատրիարքարանի գրասենեակները բաւարար չէին, եւ ոմանց մէջ «տարիներով դիզուած կը մնային զոյքեր, գիրքեր, թղթածրարներ եւ սնտուկներ»: Գործնական քայլեր առնելով, Պատրիարքը «թղթածրարներու կեդրոնացման դրութիւնը» հաստատեց, ստեղծելով «Պատրիարքարանի տեղեկատու դիւանը», հաղորդակցութեան անհրաժեշտ եղող համակարգիչներով եւ ներքին հաղորդակցութան ցանցերով:*

*Թորգոմ Պատրիարք շուտով շնորհաբաշխութիւններ կը կատարէր ու երէց միաբաններուն «Ծայրագոյն Վարդապետ»ի աստիճանները կը շնորհէր, ու յաջորդ տարիներուն նորընծայ 12 միաբաններ կը ձեռնադրէր: Մշակութային ձեռնարկներու զարկ կուտար Երուսաղէմի Հայ Մարմնամարզական ակումբներն ու Բարեսիրական Միութիւնները համագործակից դարձնելով:*

## Պաշտօնական Այց Մայր Աթոռ

*1991 Մարտ 15-ին Երուսաղէմի Հայ Պատրիարք Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեան իր որպէս Պատրիարք առաջին պաշտօնական այցելութիւնը կուտար Մայր Աթոռ: Մայր Տաճարէն «Հրաշափառ»ով մուտք կը գործէր ու կ'ողջունուէր Լուսարարապետ Յուսիկ Արքեպ. Սանթուրեանէ, որ Պատրիարքին այցելութիւնը «պատմական» կ'որակէր: Թորգոմ Պատրիարք յանուն Երուսաղէմի միաբանութեան իր ուրախութիւնն ու հոգեկան ապրումները կը բաժնէր, յայտնելով նաեւ «դժուարութիւնները որոնք կան թէ՛ Երուսաղէմի մեր Վանքին եւ կեանքին մէջ, եւ թէ՛ միաբանութեան ապագայի նկատմամբ», ակնարկելով Ս. Քաղաքի անկայուն վիճակին:*

*Վեհարան բարձրանալով Թորգոմ Պատրիարք ողջագուրանօք կ'ընդունուէր Տ.Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսէն՝ պաշտօնական ճաշկերոյթով: 1991 Մարտ 18-ին Կաթողիկոսն ու Պատրիարքը, ընկերակցութեամբ Սրբազան Հայրերու պաշտօնական այցի կ'երթային Հայաստանի Գերագոյն Խորհուրդի Նախագահ Լեւոն Տէր Պատրոսեանին: Միօրեայ Եպիսկոպոսական Ժողովէն ետք, Թորգոմ Պատրիարք կը վերադառնար Երուսաղէմ:*

## Տեղապահ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան (1994-1995)

*Տ.Տ.Վազգէն Ա.Ամենայն Հայոց Կաթողիկոսի 1994 Օգոստոս 18-ի վախճանումէն ետք, նոյն ամսուն 15-ին Մայր Աթոռի մէջ, նախագահութեամբ երիցագոյն անդամ Յուսիկ Արքեպիսկոպոս Սանթուրեանի, կը գումարուէր Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի եւ Եպիսկոպոսներու միացեալ ժողովը՝ ընտրելու համար Մայր Աթոռի Տեղապահը: Ներկայ էին Երուսաղէմի եւ Կ.Պոլսոյ Հայոց Պատրիարքներն ու 33 Թեմակալ եպիսկոպոսներ, առաւել 4 աշխարհական անդամներ՝ ընդամէնը 39 ժողովականներ: Ժողովի միակ օրակարգն էր Տեղապահի ընտրութիւնը:*

*Թորգոմ Պատրիարք եւ Գարեգին Գազանճեան Պատրիարք ատենապետեցին Ժողովին: Գարեգին Պատրիարք ընթացք տալով օրակարգին, Տեղապահի ընտրութեան ձեւի մասին ճշդումներ կատարեց, եւ Ժողովը առաջին եւ երկրորդ ընտրութիւններու կերպը որդեգրեց: Առաջին ընտրութեամբ 3 առաւելագոյն քուէ ստացող եպիսկոպոսներ, կրկին անգամ թեկնածու պիտի ըլլային, որոնցմէ երկրորդ ընտրութեամբ առաւելագոյն քուէ ստացողը պիտի ըլլար Մայր Աթոռոյ Տեղապահը: 39 ժողովականներ մեծամասնութեամբ Տեղապահ ընտրեցին Երուսաղէմի Հայոց ԹՈՐԳՈՄ ՊԱՏՐԻԱՐՔ ՄԱՆՈՒԿԵԱՆԸ:*

## Տեղապահութիւն Մայր Աթոռոյ

*Թորգոմ Պատրիարք Մանուկեան եօթ ամիսներ, 1994 Օգոստոս 25-էն 1995 Ապրիլ 3, Տեղապահի իր պաշտօնը վարեց միասնաբար Երուսաղէմի Պատրիարքի իր պաշտօնին, մինչեւ յաջորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսին ընտրութիւնը: Այդ միջոցին անհրաժեշտ գործեր կը սպասէին իրենց լրումին՝ Վախճանեալ Հայրապետի մահէն ի վեր: Տեղապահը հարկ կը տեսնէր հաստատել 1995 Ապրիլ 3-ի Ազգային-Եկեղեցական Ժողովի գումարումը՝ կաթողիկոսական ընտրութեան համար, որուն համար շրջաբերականով մը կը տեղեկացնէր հետեւեալ խնդիրները:*

*Նախ Եպիսկոպոսական Ժողովի գումարումը յանձնարարելու Թեմերուն կատարելու պատգամաւորներու ընտրութեան վերաբերեալ աշխատանքները: Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի Հոկտեմբեր 3-ի նիստին Տեղապահը մանրամասնեալ տեղեկագիր կը ներկայացնէր ճարտարապետական եւ շինարարական յանձնախումբին հետ ունեցած իր հանդիպումներու մասին՝ Տաթեւի վանքի, Նորավանքի, Սպիտակի նոր կառուցուելիք եկեղեցւոյն, Օշականի Ս. Մեսրոպ եկեղեցիի կողքին Թանգարանի նորոգութեան, եւ Երեւանի մէջ Քրիստոնէութեան Մեծ Դարձին 1700-ամեակի առիթով կառուցուելիք Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Եկեղեցւոյ շինարարութեան հետ առնչակից կարիքներուն վերաբերեալ:*

*1994-ի Սեպտեմբերի սկիզբը Տեղապահ Թորգոմ Պատրիարք այցելած էր Սիւնեաց Թեմ, Եղեգնաձոր, Գորիս, Տաթեւ, եւ կիրակի օր Վանքի անաւարտ եկեղեցւոյն մէջ պաշտամունք կատարած: Յաջորդեցաւ Ազգային-Եկեղեցական Ժողով հրաւիրել 1995 Ապրիլին, երբ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրուեցաւ Կիլիկիոյ Գարեգին Բ. Սարգիսեան Կաթողիկոսը որուն գահակալութեան նախագահեց, իր Տեղապահի պաշտօնը աւարտելով ու վերադառնալով Երուսաղէմ իր պաշտօնին:*

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave
Pasadena, CA 91104

Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
Հետաքրքրուողներէն hեռաձայնել՝ (626) 398-0506

ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ
(200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680

125 SOCIAL DEMOCRAT HUNCHAKIAN PARTY THROUGHOUT HISTORY

# ACADEMIC CONFERENCE

Dedicated to the
125th Anniversary of the
Social Democrat Hunchakian Party

## PARTICIPANTS

Prof. Richard Hovannisian
Prof. Gerard Libaridian
Prof. Kevork Bardakjian
Prof. Ara Dostourian
Prof. Ara Sanjian
Prof. Hratch Tchilingirian
Dr. Garabet Moumdjian
Prof. Vahram Shemmassian
Dr. Vartan Matiossian
Rev. Dr. Abel Manoukian
Mr. Aram Arkun

## CO-SPONSORS

Richard Hovannisian Endowed Chair in Modern Armenian History at UCLA
Los Angeles, CA

Armenian Research Center at the University of Michigan
Dearborn, MI

Woodbury University
Burbank, CA

National Association for Armenian Studies and Research
Belmont, MA

## ORGANIZED BY

Armenian Educational Benevolent Union (A.E.B.U.)
Nor Serount Cultural Association (N.S.C.A.)

## SATURDAY OCTOBER 27, 2012

9:00am - 5:00pm

## WOODBURY UNIVERSITY

7500 North Glenoaks Boulevard Burbank, CA

LIVEWEBCAST

for more information please visit our website
or scan with your mobile device
www.sdhp125.org

Seating is limited. Reservation recommended.
email: info@sdhp125.org
1060 N. Allen Avenue, Pasadena, CA 91104 Tel.: 626.398.0506

Following the conference Dinner/Discussion with the Academics
Donation: $100/person